

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մասն Դ. – անգլերէն

Արմէն Միքայելեան

Նախաբան

Ներկայ յօդուածով շարունակում ենք օտար յատուկ անունների տառադարձութեան կանոնները լուսաբանող յօդուածաշարքը, որը սկսել ենք մերձաւորաբնական լեզուներից եւ որի երկրորդ մասը նուիրել ենք հին յունարէնին ու լատիներէնին, իսկ երրորդը՝ ֆրանսերէնին¹: Ծագածաշարքի սոյն՝ չորրորդ մասը, նուիրում ենք անգլերէնից հայերէնին անցած անունների տառադարձութեանը:

Անգլերէնը համեմատաբար «երիտասարդ» լեզու է հայ իրականութեան մէջ, եւ անգլերէնի տառադարձութեան աւանդոյթը՝ տակաւին յեղյեղով: Այս լեզուի նշանակութիւնը յատկապէս աճեց վերջին՝ Ի. դարում եւ, թէեւ անգլերէն անունները դեռեւս ինչ-որ տեղ խորթ են հայաստանցի հայի ականջին (սփիւռքահայութիւնը շատ աւելի է ծանօթ դրանց), դրանք այսօր աւելի ու աւելի են ներթափանցում հայաստան ու հայ իրականութիւն: Լինելով աշխարհի ամենատարածուած եւ ամենաազդեցիկ միջազգային լեզուն, անգլերէնը գրեթէ ամե-

նուր է, եւ հայ-ամերիկեան, հայ-բրիտանական ու հայ-կանադական անմիջական կապերը, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ երկրների հետ տեղի ունեցող անգլերէն հաղորդակցութիւնը, հրատապ պահանջ են ներկայացնում, որպէսզի անգլերէնի տառադարձութիւնը համակարգուի եւ ընդունուի համայն հայութեան կողմից, նախքան այն աւելի կը մասնատուի ու կ'աղաւաղուի անփորձ թարգմանիչների, քաղաքագէտների ու լրագրողների գրչի տակ:

Այն, ինչից վախենում էինք մի քանի տասնամեակ առաջ, այսօր իրականութիւն է: Ո՛չ Հայաստանում, ո՛չ էլ Սփիւռքում չկայ անգլերէն տառադարձութեան գիտական մօտեցում: Անգլերէնից տառադարձած յատուկ անունները այսօր կրում են զանազան անձանց կամայական մօտեցումների կնիքը, իսկ Հայաստանում օտարալեզու ցուցանակների առատութեան պատճառներից մեկն էլ գուցէ այն է, որ հայաստանցին խուսափում է լատինատառ անունները հայերէնով սխալ ու ծիծաղելի կերպով գրելուց, ինչպէս՝ Փալաս Հոթել (Palace Hotel) կամ Գելերի Հոթել (Gallery Hotel):

Սոյն յօդուածով կը փորձենք գիտական հիմքերի վրայ դնել անգլերէնի տառադարձութիւնը եւ քննութեան ենթարկել դրա ոչ սակաւ նրբութիւններ: Ինչպէս մեր նախորդ յօդուածներում ենք արդէն ընդգծել, մեր այս մօտեցումը չի ենթադրում վերջնական լուծում. այն միաժամանակ նպատակ ունի մասնագէտ հասարակութեան աչքերը բանալ երեւոյթի եւ խնդրի վրայ:

¹ Տե՛ս Արմէն Միքայելեան, Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Ա. - մերձատրարեւելեան լեզուներ), - Հայկազեան Հայագիտական Հանդէս, Խ. հատոր, Պէյրութ 2020, էջ 341-364: Նոյնի, Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Բ. - հին յունարէն եւ լատիներէն), - Բազմավէպ, ԺՀԸ. տարի, 2020, թիւ 1-2, էջ 304-336: Նոյնի, Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (Մասն Գ. — ֆրանսերէն), - Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԽԱ. հատոր, Պէյրութ 2021, էջ 443-466:

Անգլերէնի տառադարձութեան որոշ հարցերի ժամանակին (1983 թ.) անդրադարձել է Հայաստանի Տերմինաբանական կոմիտէ (Եզրաբանական յանձնաժողով) կողմից մարմինը², որի եզրակացութիւնները, իրենց դրական կողմերով հանդերձ, միայն մասնակի հարցեր են շօշափում եւ լիովին ազատ չեն ժամանակի օտար անսացողութիւնից: Յանձնաժողովը փորձ չի արել համակարգելու անգլերէնի տառադարձութիւնը եւ իր որոշումները ներկայացրել է մասնակի սկզբունքներից ելնելով:

Յօդուածները չծանրաբեռնելու եւ միեւնոյն բանը մի քանի անգամ չկրկնելու համար՝ յօդուածների նախաբաններն ու ամփոփումները այսուհետեւ լինելու են հակիրճ: Այդուամենայնիւ, մեր ձեռնարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար, ընթերցողին հրաւիրում ենք աչքի անցկացնել նախորդ յօդուածների նախաբանները, տեսական մասերն ու ամփոփումները:

Անգլերէն տառադարձութեան

ժամանակագրական շրջանակը

Թէեւ անգլերէնի պատմութիւնը սկսում է Ք.Յ. Ե. դարից, անգլերէն բառերի տեսքն ու արտասանութիւնը, ի տարբերութիւն հայերէնի, մեծ փոփոխութիւններ են կրել եւ իրենց արդի տեսքն են ստացել միայն ԺԵ.-ԺԶ.-ԺԷ. դարերում: Անգլերէնի վրայ զգալի ազդեցութիւն են ունեցել զանազան լեզուներ եւ մասնաւորապէս ֆրանսերէնն ու լատիներէնը: Անգլիայի նորմանդական նուաճումը (1066 թ.) հիմքերից ցնցեց հին սաքսոներէն լեզուն եւ այն վերածեց անգլերէնի ու նորմանդական ֆրանսերէնի մի խառնուրդի: Եթէ արդի անգլերէնի հիմնական բառամթերքը

եւ ձեւաբանութիւնը գլխաւորապէս սաքսոնական են, ապա բառապաշարի մի ահռելի մասը, ինչպէս նաեւ շարահիւսութեան տրամաբանութիւնը՝ ֆրանսական: Անհնար է անգլերէնը պատկերացնել առանց այդ ֆրանսական շերտի:

Դրա վրայ՝ յետագայ դարերում, աւելացան նաեւ բազմահազար փոխառութիւններ լատիներէնից, ինչը աւելի բարդացրեց մեր այսօրուայ, այն է՝ տառադարձութեան խնդիրը: Խառնաշփոթից խուսափելու համար տառադարձողը պէտք է ուշադիր լինի. անունները կարող են լինել անգլերէն (սաքսոներէն), ֆրանսերէն (նորմանդերէն), լատիներէն կամ մի այլ լեզուից սերած (յաճախ՝ հին յունարէն): Մենք ճիշտ չենք գտնում անգլերէն բոլոր անունները սաքսոնական ձեւերով տառադարձելը: Հայի ականջին բաւական ծանօթ են ե՛լ ֆրանսերէն, ե՛լ լատիներէն ու յունարէն անունները, եւ այս կամ այն անունը հնարաւոր է, որ աւելի հաճելի լինի լսել հային ծանօթ արտայայտումներով:

Հետեւաբար, ե՛լ միջին անգլերէնի պարագայում (ԺԲ.-ԺԵ. դդ.), ե՛լ նոր ու ժամանակակից անուններում, հարկաւոր է աջալուրջ լինել:

Անգլերէն տառադարձութեան

աշխարհագրական շրջանակը

Ի հակառակէն՝ անգլերէնն այսօր համաշխարհային լեզու է: Նա ներկայ է բոլոր մայրցամաքներում եւ իր տարածուածութեամբ մեզ՝ հայերիս համար հանդիսանում է միջնորդ լեզուներից առաջինը: Ինչպէս յօդուածաշարքիս առաջին մասում ենք նշել, հայ լեզուաբանութիւնը հնարաւորութիւն չունի ուսումնասիրելու աշխարհի հազարաւոր մանր մունր լեզուներ, եւ մենք ստիպուած ենք որոշելու, թէ այդպիսի լեզուների դէպքում տառադարձութեան ինչ միջնորդ լեզու ենք ընտրելու: Անգլիալեզու Մեծ Բրիտանիայի, Ամերի-

² Տե՛ս Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատու (1956-2006), Յ. Խ. Բարսեղեանի խմբագր., Երևան, «9-րդ հրաշալիք» հրատ., 2006, էջ 178-181:

կայի Միացեալ Նահանգների, Կանադայի, Աւստրալիայի եւ մի քանի այլ երկրների կողքին ունենք անգլիախօս բազմամիլիոն բնակչութեամբ՝ Ասիայի ու Ափրիկէի տասնեակ երկրներ, որոնց պաշտօնական լեզուն անգլերէնն է, եւ որոնց աշխարհաքրական անունները անգլիացիներն են մեզ յաճախ աւանդել:

Այդուամենայնիւ պէտք է ուշադիր լինել: Օրինակ՝ թէեւ Հնդկաստանում անգլերէնը պաշտօնական լեզու է եւ լայն գործածութիւն ունի, Հնդկաստանի հետ առնչուող անունները մենք հնդկերէնից ենք տառադարձելու, քանզի հնդկերէնը խոշորագոյն լեզու է եւ միջնորդ լեզուի կարիքը չունի³:

Անգլերէնի տառատեսակները

Այսօր անգլերէնի չորս հիմնական տարատեսակ են հաշոււմ. բրիտանական, ամերիկեան, կանադական եւ աւստրալական: Ամեն մէկն իր իւրապատկութիւններն ունի, սակայն, բարեբախտաբար մեր տառադարձութեան համար, այդ առանձնայատկութիւնները այնչափ չեն, որ մենք ստիպուած լինենք միեւնոյն անունը տարբեր ձեւերով տառադարձելու: Այստեղ մենք առաւելաբար քննելու ենք բրիտանական անգլերէնը, որպէս անգլերէնի տարատեսակների մայր լեզու: Անդրադառնալու ենք նաեւ ամերիկեան առանձնայատկութիւններին, քանզի ամերիկեան մայրցամաքի անգլիալեզու բնակչութիւնը մի քանի հարիւր միլիոն է, եւ այսօր ԱՄՆը շատ մեծ դեր ու ազդեցութիւն ունեն աշխարհում:

Ինչ վերաբերում է կանադական ու աւստրալական անգլերէններին, մենք այս

յօդուածում դրանց չենք անդրադառնալու, նախ՝ որովհետեւ այդ տարատեսակներով խօսողները համեմատաբար աւելի սակաւաթիւ են եւ դրանց ազդեցութիւնը նուազ՝ հայ հասարակութեան վրայ, երկրորդ, որ դրանց առանձնայատկութիւնների ճշդ մեծամասնութիւնը արդէն առկայ է բրիտանական կամ ամերիկեան անգլերէններում:

Անգլերէնի ճշգրտութեան ու ճշիւմները

Անգլերէնի պարագայում, ուր բառերի գրութիւնը բաւական վատ է յարմարեցրած բանաւոր հնչողութեանը, տառադարձելիս աւելի տրամաբանական է իբրեւ ելակէտ ընդունել հնչողութիւնը, այն բնականաբար հնարաւորինս ճշտելով գրութեամբ ու ստուգաբանութեամբ:

Ստորեւ՝ մասնագէտներին իբրեւ յիշեցում, այլոց՝ ի գիտութիւն, բերում ենք Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութեան (IPA⁴) աբուգարայի նշանագրերը, որոնք կիրարկում են անգլերէնի հնչոյթները արտայայտելու համար: Հնչոյթի կամ հնչիւնի⁵ նշանը ընդունուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ (իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չափերտների մէջ. «ա», «բ», «գ» եւ այլն): Ստորեւ՝ օրինակների մէջ, թաւ ընդգծել ենք տուեալ հնչոյթը արտայայտող տառերը:

Բրիտանական անգլերէնի ձայնային համակարգը.

4 International Phonetic Association (յապաւած՝ IPA), Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութիւն, որի ճշգրտական «այբուբենով» է ընդունուած գրի առնել զանազան լեզուների ճշգրտութեանը:

5 «Հնչոյթ» եւ «ճշիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լեզուաբաններին: Տե՛ս Հ. Զ. Պետրոսեան, Ս. Ա. Գալստեան, Թ. Ա. Ղարազիւլեան, Հեղուաբանական բառարան, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975:

3 Հնդկերէնի կ'անդրադառնանք յաջորդ յօդուածներից մեկում: Թէեւ Հնդկաստանում հնդկերէնից բացի բազմաթիւ այլ լեզուներ են առկայ, անգլերէնը չէ, որ պէտք է դրանց համար միջնորդ լեզու ծառայի:

Կարճ ձայնաւորներ (7). [ʌ] *cut*, [æ] *bad*, [e] *bed*, [ɪ] *ship*, [ɒ] *pot*, [ʊ] *put*, [ə] *ago*:

Երկայն ձայնաւորներ (5). [i:] *sheep*, [a:] *calm*, [ɔ:] *paw*, [u:] *boot*, [ɜ:] *bird*:

Կիսաձայններ (տալիս ենք ըստ աւանդական լեզուաբանութեան. սրանք ըստ էութեան բաղաձայն են) (2). [j] *yet*, [w] *wet*:

Բաղաձայններ (22). [b] *back*, [p] *pack*, [d] *dog*, [t] *tie*, [ð] *then*, [θ] *thin*, [g] *go*, [k] *kit*, [z] *zoo*, [s] *soon*, [dʒ] *jam*, [tʃ] *chin*, [ʒ] *measure*, [ʃ] *shoe*, [v] *van*, [f] *fat*, [l] *lot*, [r] *rat*, [m] *mat*, [n] *net*, [ŋ] *sing*, [h] *hat*:

Երկբարբառներ (8). [aɪ] *bite*, [eɪ] *make*, [ɔɪ] *boy*, [aʊ] *now*, [əʊ] *boat*, [eə] *hair*, [ɪə] *here*, [ʊə] *poor*:

Եռաբարբառներ (5). [aɪə] *fire*, [eɪə] *player*, [ɔɪə] *employer*, [aʊə] *flower*, [əʊə] *lower*:

Վաղ նոր անգլերէնում (ԺԵ.-ԺԷ. դարերում) տեղի է ունեցել այսպէս կոչուած ձայնաւորների մեծ տեղաշարժը (*the Great Vowel Shift*⁶), որի հետեւանքով երկայն ձայնաւորները արմատական փոփոխութիւններ են կրել: Անգլերէնի ուղղագրութիւնը, որ տպագրութեան հետ միասին կարգաւորուեց ու ամրացաւ, վերջ ի վերջոյ քարացաւ իր այն ժամանակուայ տեսքով, եւ այդ պատճառով այսօր ունենք գրութեան ու արտասանութեան միջեւ մեծ տարբերութիւններ: Որոշ կարճ ձայնաւորներ, երկբարբառներ ու բաղաձայններ նոյնպէս ունեցան մասնակի շեղումներ: Ստորեւ՝ երկայն ձայնաւորների տեղաշարժը:

	A	E	I	O	U
Անգլիկն	[a:]	[ɛ:] [e:]	[i:]	[ɔ:] [o:]	[u:]
Միջանկեալ	[æ:] [ɛ:] [e:]	[e:]	[eɪ]	[ou]	[əʊ]
Առ	[eɪ]	[i:]	[aɪ]	[əʊ]	[aʊ]

Օրինակներ. *name* ['na:mɜ] > [neɪm], *meat* [me:t] > [me:t] > [mi:t], *meet* [me:t] > [mi:t], *time* ['ti:mɜ] > [taɪm], *go* [gɔ:] > [gəʊ], *moon* [mo:n] > [mu:n], *mouse* [mu:s] > [maʊs]:

Հատինական այբուբենի տառերի աւանդները նոյնպէս փոխուեցին. A [eɪ], E [i:], I [aɪ], O [ou], U [ju:] եւ այլն:

Ամերիկեան արտասանութեան աւանդնայատկութիւններից են.

ա) [r] հնչիւնը ամեն տեղ արտասանւում է. *bar*, *dark*, *New York*:

բ) բրիտանական [ɒ] *pot* հնչիւնը (մօտ հայերէն [ո]ին) արտասանւում է [ɑ]

(մօտ հայերէն [ա]ին). *hot*, *odd*, *not* հնչում են [հաթ], [ադ], [նաթ]:

գ) բրիտանական [ɑ:]ի փոխարէն շատ բառերում լսում ենք [æ]. *ask*, *dance*, *last*, *half* նոյն ձայնաւորը ինչ եւ *bad* բառի մէջ:

դ) բրիտանական [ʌ] հնչիւնի փոխարէն առկայ է [ə]ին մօտ հնչիւն. *cut*, *cur*, *mud*, *current* բառերը բրիտանական անգլերէնը հնչեցնում է [քաթ, քափ, մադ, քալընթ], ամերիկեանը աւելի մօտ է [քըթ, քըփ, մըդ, քըրընթ] հնչմանը:

ե) բրիտանական [əʊ] երկբարբառը Ամերիկայում հնչում է կա'մ [ou], կա'մ երկայն [ō]. *boat*, *go*, *old* բառերի մէջ

⁶ Տե՛ս, օրինակ՝ *Albert C. Baugh and Thomas Cable, A History of the English Language*, 5th edition, Routledge, London, 2005, pp. 222-224:

անգլիացիին լսում է [ըլ⁷], ամերիկացիին՝ [օլ] կամ [օօ]:

զ) ամերիկեան անգլերէնը, քանզի արտասանում է բոլոր [ը]երը, փաստօրէն չունի եռաբարբառներ. *fire, player, employer, flower, lower* բառերի մէջ երկբարբառին յաջորդում է անմիջապէս [ը], թէեւ նախորդող [ը]ն բացառուած չէ:

Ամերիկեան անգլերէնն ունի այլ, ոչ սակաւ նրբութիւններ, որ այստեղ չենք բերում: Դրանք առաջնային եւ երկրորդային շեշտերի, զանազան հնչիւնների ու առոգանութեան նրբութիւնների, առանձին բառերի արտասանութեան եւ այլնի ոլորտին են վերաբերում: Դրանք մեր՝ հայերէն տառադարձութեան համար առանձնակի դեր չեն խաղալու (տե՛ս ստորեւ):

Հայերէն տառադարձութեան հնչիւնական սկզբունքները

Ինչպէս արդէն քանիցս խօսել ենք, հայերէնի հնչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք պատշաճ է, եւ անհրաժեշտ է, յարգել իւրաքանչիւր լեզուից կատարելիք տառադարձութեան ժամանակ: Աշխարհի բոլոր լեզուները նոյն պայմաններում են գտնւում եւ բաւարարւում են իրենց տառամթերքով:

Յիշեցման համար՝ ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հայերէն տառադարձութեան՝ նախորդ երեք յօդուածներում արծարծած սկզբունքները: Յօդուածները չծանրաբեռնելու համար մանրամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրաւիրում ենք, նախքան որեւէ լեզուի տառադարձութեանն անդրադառնալը, անպայման ծանօթանալ այդ սկզբունքներին (խօսքը

ե՛ւ սոյն յօդուածի, ե՛ւ յօդուածաշարքիս բոլոր մնացած յօդուածների մասին է):

ա) Պայթական («բ-պ-փ», «գ-կ-ք», «դ-տ-թ») եւ պայթաչփական («ջ-ճ-ջ», «ծ-ծ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայերէն դասական տառադարձութեան ողնասիւններից մեկն է:

բ) «ե» եւ «է» տառերի գրութիւնը: Տառադարձութիւններում «ե»ը գրում ենք բառասկզբին, կամ բառամիջում՝ բաղաձայններից առաջ, իսկ «է»ն գրում ենք բառավերջին, կամ ձայնաւորից առաջ: Բառասկզբի «ե»երը պարտադիր չէ [յե] արտասանել:

գ) Օտար IPA [օ] հնչիւնը տառադարձութիւնների մէջ ամենուր արտայայտում ենք մեսրոպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչպէս եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [վո] ընթերցել: Կրիկեան ժամանակներից մուտք գործած կլոր «օ» տառը տառադարձութեան համար չէ:

դ) Բառամիջում եւ բառավերջին խուսափում ենք «ը» գրելուց:

ե) Օտար IPA [v] եւ [w] հնչիւնները հայերէն արտայայտում ենք «վ, ւ, ու» տառերից մեկով, ըստ հայոց դասական ուղղագրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ» (երբեք՝ «ու»): Ըստ հնարաւորութեան օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ, իւ» երկբարբառները: Բառամիջում՝ բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ու»:

զ) Օտար «ia, ie, ii, io, iu» համակցութիւնները արտայայտում ենք բառասկզբին «յա, յե, յի, յո, յու» կապակցութիւններով, բառամիջում՝ «իա, իե, ի (կրկնակ «իի»ն պարզւում է), իո, իու» (եւ ոչ թէ մեր երկբարբառներով):

է) Բառասկզբի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [հ] չէ: Աւան-

⁷ Հայերէն [ւ] հնչիւնը հնում ունէր IPA [w] արժէքը: Այդ իմաստով էլ մեքս պն հիւրարկում ենք այստեղ:

դական անուններում այն [հ] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պէտք է իր ձայնով [յ] արտասանենք:

ը) Հայերէնի երկբարբառներն ու եռբարբառներն են. «այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, ւո, եայ, եաւ (եօ), ւոյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարեւոր է յարգել սրանց գրութեան կանոնները եւ չյօրինել նոր կապակցութիւններ:

թ) Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար IPA [r] հնչիւնը ամենուր գրում ենք «ր», բացառութեամբ բառասկզբի, ուր գրում ենք «ռ»: «Ռ»-ի գրութիւնը «ն»-ից եւ «լ»-ից առաջ պարտադիր է:

Հիմնարար այս սկզբունքների մասին աւելի մանրամասն տե՛ս մեր նախորդ երեք յօդուածների համանուն բաժիններում (Հայերէն տառադարձութեան հնչիւնա- (բան)ական սկզբունքները):

Կիլիկեան եւ սովետահայ տառադարձութիւնները

Ինչպէս արդէն քննարկել ենք նախորդ յօդուածում, այսօր փաստօրէն ունենք տառադարձութեան երեք սկզբունք՝ մեսրոպեան կամ հայկաբան, կիլիկեան (կամ երբեմն՝ արեւմտահայ, սփիւռքահայ) եւ սովետահայ (կամ հայաստանեան) սկզբունքները:

Կիլիկեան սկզբունքը ծնունդ առաւ Կիլիկիայում ԺԱ. դարից սկսած, «դիմացաւ» նոր ժամանակների բովին եւ գոյատեւում է մինչեւ այսօր (ոչ իր բոլոր գծերով): Սովետահայ սկզբունքը առաջ եկաւ 1922 եւ 1940 թթ. ուղղագրական փոփոխութիւնների հետեւանքով եւ մինչեւ այսօր հանդիսանում է Հայաստանի պաշտօնական սկզբունքը:

Ստորեւ բերում ենք, համառօտ, այդ երեք սկզբունքների համեմատական մի աղիւսակ՝ առաւել կարեւոր մի քանի տարբերութիւններով:

օտար հնչիւն	հայկաբան	կիլիկեան	սովետահայ
[e]	է / է	է	է / ե
[o]	ո	օ	օ / ո
[ə] բառամիջում (= հայ. «ը»)	- / ա, է, ի, ո, ու	ը	ը, ա, է, ի, ո, ու
[y] = ֆրանս. «u», թուրք. «ü»	ու / իւ	իւ	յու
[ø] = ֆրանս. «eu», թուրք. «ö»	ո	էօ	յո / ե, է
[ej] երկբարբառ	է / է	էյ	էյ / եյ
«ia, ie, ii, io, iu» բառասկզբին	յա, յե, յի, յո, յու	եա, ե(է), եի, եօ, եու	յա, (յ)ե, յի, յո, յու
«ia, ie, ii, io, iu» բառամիջում	իա, իե, ի, իո, իու	եա, եէ, եի, եօ, եու	յա, յե, յի, յո, յու
[r] բառասկզբին	ռ	ռ / ր	ռ
[v]	վ / լ / ու	վ	վ
[w] բառասկզբին	վ	ու	վ, ու
Թեք նշանը (/) բաժանում է ըստ դիրքի տառադարձումները			
ստորակէտերը բաժանում են միեւնոյն դիրքի տարբեր տառադարձումները			

Օրինակի համար՝ օտար [e] հնչիւնը կիլիկեան սկզբունքով ամենուրեք գրւում է «է». Թէրլէմէզեան, Թէքէեան, Աճէմեան, Էքմէքճեան, Չէօրէքճեան: Նոյն հնչիւնը

սովետահայ սկզբունքով բառասկզբում գրւում է «է», այլուր՝ «ե»: Հայկաբան (մեսրոպեան) սկզբունքը պահանջում է, որ

բառավերջին կամ ձայնաւորից առաջ գրենք «է», մնացած դիրքերում՝ «ե»:

Սովետահայերէնի⁸ (աւելի ստոյգ՝ յետսովետահայերէնի) վրայ շարունակում է մեծ ազդեցութիւն ունենալ ռուսերէնը, որը, հայաստանաբնակ հայերի մի զգալի մասի միակ օտար լեզուն լինելով, օտարալեզու տառադարձութիւնների գերակշիռ մասի աղբիւրն է: Սփիւռքի արեւմտահայերէնի վրայ այսօր ազդում են անգլերէնն ու ֆրանսերէնը:

Մենք, ինչպէս քանիցս կրկնել ենք, դէմ ենք այդպիսի տառադարձութիւններին: Նրանք մի կողմից՝ օտար լեզուների ազդեցութեան, միւս կողմից՝ մետրոպեան կանոնները զանց առնելու հետեւանք են: Աւելորդ չենք համարում կրկնել, որ օտար լեզուներին յարմարուելու փորձերը կերպարանափոխում են հայերէնը եւ ոտնակոխ են անում մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու շինելու ջանքերը:

Անգլերէնից տառադարձելու կանոններ եւ
Արրութիւններ

Հայերէնն ու բրիտանական անգլերէնը ունեն իւրաքանչիւրը 36 պարզ հնչոյթ (երկբարբառներն ու եռաբարբառները չհաշուած): Անգլերէնն ունի 7 կարճ ձայնաւոր, 5 երկայն ձայնաւոր, 2 կիսաձայն, 22 բաղաձայն: Հայերէնն ունի 6 ձայնաւոր, 1 կիսաձայն, 29 բաղաձայն: Հայերէնը չի տարբերում կարճ ու երկայն ձայնաւորներ:

Ստորեւ անդրադառնում ենք անգլերէն տառադարձութեան գլխաւոր կանոններին ու նրբութիւններին:

ա) Բաղաձայնների մեծ մասի տառադարձումն ընդհանրապէս դժուարութիւններ չի յարուցում. [b], [d], [g], [z], [s], [dʒ], [tʃ], [ʒ], [ʃ], [v], [f], [l], [m], [n], [h] հնչիւնները համապատասխանաբար լինում են. «բ», «դ», «գ», «զ», «ս», «ջ», «չ», «ժ», «շ», «վ/ւո», «ֆ», «լ», «մ», «ն», «հ»: Օրինակներ. Baltimore Բալթիմոր, Dallas Դալաս, Glendale Գլենդեյլ, Arizona Արիզոնա, Stafford Սթաֆորդ, Jedburgh Ջեդբուրգ, Chelsea Չելսի, vision վիժիոն, Shropshire Շրոփշիր, Virginia Վիրջինիա, Franklin Ֆրանքլին, Lansing Լանսինգ, Manchester Մանչեստր, Nottingham Նոթինգ(հ)ամ, Hartford Հարթֆորդ:

Հայերէնում [վ] հնչիւնը գրաւոր երեք արտայայտութիւն ունի (տե՛ս վերը). Vermont Վերմոնտ, Dover Դովր, Devon Դեւոն, Beverly Բեւերլի, Oliver Օլիւեր, Liverpool Լիւերփուլ, Roosevelt Ռուզուելթ:

Անգլերէնի, ինչպէս նաեւ եւրոպական այլ լեզուների [ֆ] հնչիւնը հայերէն տառադարձում ենք մեր «կիլիկեան» «ֆ» տառով, քանզի դա է լատիներէն «F» տառի համարժէքը եւ գծագիր դուստրը («Ֆ»-ն «F»-ի արագագիր ձեւի հայելային պատկերն է): Չփոթել հին յունարէնի «Փ»-ի հետ, որի լատիներէն համարժէքն է «ph»: Օրինակներ. Frankfort Ֆրանքֆորտ, Rockefeller Ռոքֆել(ե)ր, Woolf Վուլֆ, Belfast Բելֆասթ:

բ) Անգլերէնի խուլ պայթականները [p, t, k] տառադարձում ենք հայերէն չնչեղ կամ պարզ խուլերով [փ/պ, թ/տ, ք/կ]: Սա շատ նուրբ հարց է եւ մասնագիտական քննարկման առարկայ: Անգլերէնը, իբրեւ գերմանական խմբի լեզու, դրանք մեծ մասամբ արտասանում է չնչեղ, եւ միայն հագուադէպ՝ պարզ: Սակայն ինքը միշտ չէ, որ գիտակցում է դրանց տարբերութիւնը. անգլիախօսի համար չնչեղ ու պարզ խուլները միեւնոյն հնչոյթն են:

⁸ «Սովետաֆայերէն» ասելով նկատի ունենք 1920-30-ական թուականներից Հայաստանում հաստատուած արեւելահայերէնը, որը մինչեւ 1990ական թթ. ռուսերէնի անմիջական, իսկ այժմ՝ ասանդական ազդեցութեան տակ է եղել եւ է: Խօսքը ոչ միայն (եւ այնքան) ուղղագրութեան, որքան բառապաշարի ու շարահիսական օտարաբանութիւններով յագեցած շինածոյ լեզուի մասին է:

Երկաստիճան արեւմտահայերէնը դրանք մշտապէս շնչեղներով է տառադարձել («փ, թ, ք»), քանզի ինքն էլ չունի պարզ խուլներ: Գալով արեւելահայերէնին, եթէ առաջներում ռուսերէնի ազդեցութեան տակ գտնուող սովետահայերէնը պարտադրում էր դրանք միայն պարզ խուլներով տառադարձել («պ, տ, կ»)⁹, ապա 1950-60-ական թուականներից սկսած, եւ մանաւանդ Հայաստանի անկախացումից յետոյ, շատ լրատուամիջոցներ ու թարգմանիչներ փորձեցին դրանք ամենուրեք շնչեղներով տառադարձել (ինչպէս որ հայի ականջը դրանք լսում է անգլերէնում):

Դասական հայերէնը սիրում է շնչեղ եւ պարզ խուլների ներդաշնակութիւն, դրանց քանակի եւ դիրքերի հարթեցում¹⁰: Մենք հասկանում ենք, որ հարցը նուրբ է: Մի կողմից՝ դասական հայերէնը կը գերադասէր առաւելութիւն տալ պարզ խուլներին, սակայն միւս կողմից՝ անգլերէնի կենդանի հնչողութիւնը մեզ մղում է շնչեղների կողմը: Այստեղ մի քանի լուծում կարող է լինել, եւ դրանք երբեմն աւելի «քաղաքական» լուծումներ են, քան թէ լեզուա(բան)ական:

Առաջին՝ ինքնաբուխ, միտքը կարող էր լինել՝ բոլոր խուլ պայթականները շնչեղներով («փ, թ, ք») տառադարձել: Սակայն, ռոմանական լեզուներից (ֆրանսերէն, լատիներէն...), ինչպէս նաեւ հին յունարէնից սերած բառերի առատութիւնը անգլերէնում մեզ ստիպում է չգնալ այդ քայլին: Իսկապէս՝ ֆրանսերէնի, լատիներէնի եւ հին յունարէնի պարզ խուլները դժուար են ընկալւում շնչեղ հնչողութեամբ եւ տառադարձութեան տեսան-

կիւնից անթոյլատրելի են: Օրինակ՝ *Palace Hotel* անուան մէջ անթոյլատրելի է գրել «Փալաս», քանզի այդ բառը լատինական ծագում ունի եւ իմաստակիր կարող է լինել հայի ականջին: Այդ բառի համար, որի լծորդն է հայերէն «պալատ» բառը, «Պալաս» ձեւը անառարկելիօրէն նախընտրելի է:

Երկրորդ լուծումը կարող է լինել հետեւեալ մօտեցումը: Նախ՝ որոշել ու առանձնացնել, թէ արդեօք բառը բուն անգլերէն է, թէ ասենք՝ ֆրանսերէն, լատիներէն կամ հին յունարէն (սրանց համար տե՛ս ստորեւ): Այնուհետեւ՝ բուն անգլերէն (եւ գերմանական խմբի այլ լեզուներից փոխ առած) բառերի մէջ գերադասել շնչեղ տառադարձութիւն, մասնաւորապէս՝ այն պայթականների համար, որոնց շնչեղութիւնը բառի այս կամ այն դիրքում յստակ լսելի է: Օրինակ. *Times* Թայմս, *Tennessee* Թենեսսի, *Wight* Վայթ, *Wall Street* Վալ/Վոլ Սթրիթ: Եթէ ստուգաբանութիւնը ակնյայտ չէ (կամ հայի ականջին անծանօթ մի բառ է), թոյլատրելի լինի բառը համարել «բուն» անգլիական ծագման եւ պայթականները տառադարձել շնչեղ, ինչպէս «street» բառը, որը թէեւ լատինական փոխառութիւն է, սակայն այնքան է «անգլիացել», որ այլեւս ընկալելի չէ իբրեւ լատիներէն բառ: Ուստի գրենք «սթրիթ», քան թէ «ստրիտ»: Այլ դիրքերում, որտեղ շնչեղութիւնը աննշան է կամ էական չէ, շնչեղների կուտակումից խուսափելու համար կարող ենք տառադարձել պարզ խուլներով: Օրինակներ. *Cromarty* Բրոմարտի անուան մէջ առաջին բաղաձայնը տառադարձենք շնչեղ, սակայն վերջինը կարող ենք գրել «տ»: Նմանապէս՝ *Welshpool, Liverpool* անունների մէջ «pool» բաղադրիչը կարող ենք գրել «պուլ» (իբրեւ արեւելահայերէնում արդէն աւանդոյթ դարձած): Այս մօտեցումը նոյնպէս ունի իր թերութիւնները, քանզի համոզուած չենք, որ թարգմանիչները կամ լրագրողները կարող են առաջին հայեացքից որոշել, թէ բա-

⁹ «Տերմինաբանական կոմիտէ» այդպիսի մի որոշում էր կայացրել 1939 թ.: Տե՛ս *Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու*, էջ 178:

¹⁰ Հին յունարէնը նոյնպէս խուսափում էր շնչեղների կուտակումից. երկու շնչեղի առկայութեան դէպքում մեկը պարզում էր:

ուր ինչ ծագում ունի կամ որտեղ պէտք է շնչեղ խուլ դնել, որտեղ՝ պարզ: Չենք կարող նաեւ համոզուած լինել թէ, ասենք՝ Ամերիկայի հնդկացիական լեզուներից անգլերէն մտած անունները անպատճառ շնչեղ պայթականներով պէտք է տառադարձել. Connecticut, գրենք Քոնեքթիքտ¹⁰, Կոնեկտիկոտ, թէ՞ Քոնեկտիկուտ, Քոնեկտիքուտ, Քոնեքթիկուտ... (Հինգ պայթական եւ հնարաւոր բազմաթիւ տառադարձութիւններ) :

«Տերմինաբանական կոմիտէի» 1983 թ. որոշումը յանձնարարում է շնչեղ գրել միայն սկզբնատառը (ներառեալ՝ բարդ անունների երկրորդ բաղադրիչներինը). Pitt Փիտ, Pike Փայկ, Hawke Հոկ, Mac Tavish Մակ-Թավիշ, Port Patrick Փորտ Փատրիկ¹¹: Ակնյայտ է, սակայն, այսպիսի մօտեցման սահմանափակութիւնը: Pittը գերադասելի է գրել Փիթ, Pikeը՝ Փայք, Hawkeը՝ Հոք, քանզի սրանք այն դիրքերն են, որտեղ շունչը առաւել զգալի է: Ի հակառակէն՝ Port Patrickը անթոյլատրելի է շնչեղներով գրել, քանզի ե՛ւ «պորտ» բառը, ե՛ւ «Պատրիկ» անունը ֆրանս-լատինական են եւ հայերիս քաջ յայտնի:

Հարցի լեզուա(բան)ական կողմը յարգելու եւ միեւնոյն ժամանակ հետեւողական լինելու նպատակով մենք հետեւեալ մօտեցումն ենք դրսեւորելու մեր այս յօդուածում: Նախ՝ առանձնացնելու ենք ակնյայտօրէն ռոմանական լեզուներից եւ հին յունարէնից սերած անունները (որոնք պարզ խուլներով ենք տառադարձելու), եւ այնուհետեւ՝ անգլերէն (կամ գերմանական խմբի այլ լեզուներից եկող, նաեւ՝ անյայտ) արմատները գրելու ենք շնչեղ՝ «փ, թ, ք»:

Սակայն մեր այս մօտեցումը վերջնական չէ, եւ հարցը անհրաժեշտաբար պէտք է դնել մասնագիտական քննարկման:

գ) Անգլերէնի [ð] եւ [θ] միջատամնային բաղաձայնները (երկուսն էլ միեւնոյն գրութիւնն ունեն՝ «th»), ի տարբերութիւն նոյնահունչ արաբերէն բաղաձայնների¹², տառադարձում ենք «դ» եւ «թ»: Յիրաւի, անգլերէնի այս երկու բաղաձայնները ստուգաբանօրէն կապուած են այլ լեզուների [դ] եւ [թ] հնչիւններին (the / գերմ. die, thorn / գերմ. Dorn, thing / գերմ. Ding, mother < հին անգլ. mōdor / գերմ. Mutter, father < հին անգլ. fæder / գերմ. Vater), եւ բնաւ [զ]ին ու [ւ]ին: Անգլերէնի ճշգրիտ արտասանութեանը նուազ տիրապետող այլազգի անձինք (գերմանացի, հնդիկ, նաեւ հայ) այդ բաղաձայնները արտաբերում են հենց [դ] եւ [թ]: Որը եւ ամրապնդում է մեր մօտեցման տրամաբանութիւնը: Օրինակներ. Galsworthy Գալսուորդի, Sutherland Սադրլանդ, Rothesay Ռոթսի, Aberystwyth Աբերիսթուիթ, Plymouth Փլիմութ, Perth Փերթ, Portsmouth Պորտսմութ, Margaret Thatcher Մարգարետ Թաթչըր, Elizabeth Ելիզաբեթ, Thames Թեմզ (այս վերջինիս մէջ «th»ը հնչում է [t]):

Առաջարկում ենք անգլերէնի որոշեալ «the» յօդը տառադարձել, այնտեղ որտեղ այն իսկապէս պէտք է գրել, իր անկախ (իրեւ առանձին բառ) լիարժէք արտասանութեամբ՝ [ði:], հայերէն՝ «դի» (Հմտ. գերմաներէն «die» յօդը): Օրինակներ չգտանք՝ այնքան հազուադէպ է պարագան (քանզի անունների մէջ յօդը մեծ մասամբ զանց ենք առնում The Times Թայմս):

դ) Անգլերէնի [r] բաղաձայն հնչոյթը արտասանական տատանումներ ունի: Բրիտանական գրական անգլերէնը ձայնաւորներից յետոյ այն (գրեթէ) չի հնչեցնում: Ամերիկացիների մեծ մասը այն միշտ է արտասանում, իսկ միւս անգլիախօսները մասամբ՝ այո, մասամբ՝ ոչ: Հայերէն տառադարձութեան համար այդ տատանում-

11 Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, էջ 178-9:

12 Տե՛ս մեր յօդուածաշարքի Ա. մասը (մերձատրաբեւեկեան լեզուներ):

ները էական չեն: Մենք այդ հնչոյթը միշտ տառադարձում ենք մեր «ր/ռ» տառերով (Համաձայն Հայերէնի ուղղագրութեան), ինչպիսին էլ լինի նրա արտասանութիւնը, նոյնիսկ՝ Համր: Օրինակներ. *Rhode Island* Ռոդ Այլանդ, *Raleigh* Ռալի, *Richmond* Ռիչմոնդ, *Oregon* Որեգոն, *Missouri* Միսուրի, *Trenton* Թրենթոն, *Arlington* Արլինգթոն, *Melbourne* Մելբուրն, *Aberdeen* Աբերդին, *Carnegie* Քարնեգի, *Dorset* Դորսեթ, *Armstrong* Արմսթրոնգ, *David Cameron* Քամերոն:

«Ր»ի գրութիւնը մեզ միաժամանակ օգնում է խուսափելու անգլերէնի որոշ երկբարբառներ եւ բոլոր եռաբարբառները միայն ձայնաւորներով արտայայտելու դժուարութիւնից (տե՛ս ստորեւ): Ի դէպ, մենք միակ լեզուն չենք, որ այդպէս ենք վարւում. յունարէնը, ռուսերէնը, բուլղարերէնը, արաբերէնը, պարսկերէնը, վրացերէնը եւ այլ ոչ լատինագիր լեզուներ նոյն մօտեցումն ունեն այս հարցի շուրջ:

ե) Անգլերէնի [ŋ] բաղաձայնը վաղուց արդէն ընդունուած է գրել «նգ» (արեւմտահայերէնը՝ բնականաբար «նկ»): Թէեւ անգլիագէտ լեզուաբանները տարբերում են [ŋ] եւ [ŋg] հնչումները, Հայի (եւ ոչ միայն Հայի) ականջը դա չի ընկալում, եւ երկուսն էլ գրում ենք «նգ»: Անշուշտ, հնչիւնաբանօրէն աւելի ճիշտ կը լինէր գրել պարզապէս «ն»¹³, քանզի դա ռեզային [ն] է եւ իր մէջ [գ] հնչիւն չունի: Սակայն ե՛ւ Հայերէնը, ե՛ւ շատ ուրիշ լեզուներ, անգլերէնի այդ հնչիւնը աւանդաբար գրում են երկու տառով՝ «նգ/ng»: Օրինակներ. *Lansing* Լանսինգ, *Washington* Վաշինգթոն, *Springfield* Սփրինգֆիլդ, *Reading* Ռեդինգ, *Armstrong* Արմսթրոնգ:

Բնականաբար, [ŋk] հնչողութեան դէպքում գրելու ենք «նք» (եթէ բառը

«բուն» անգլերէն արմատից է, այլապէս՝ կարող է լինել նաեւ «նկ»): Օրինակ. *Bankside* Բանքսայդ (քանզի այստեղ անգլերէն «bank» «գետափ» բառն է), *think-tank* Թինք-թանք: Իսկ *Bank of Scotland* Բանկ ով Սկոտլանդ գրում ենք «կ»ով, քանի որ «բանկ» արմատը մեզ ծանօթ է ռոմանական լեզուներից (ֆրանսերէն, իտալերէն): «Frank»ը գերադասում ենք գրել «ք»ով՝ *Franklin* Ֆրանքլին, *Frankfort* Ֆրանքֆորտ, քանզի խօսքը այստեղ «ֆրանկ» ցեղանուն մասին չէ:

զ) Անգլերէնի [v] եւ [w] բաղաձայնների դիմաց նոր Հայերէնը ունի միայն [վ] հնչոյթ (եւ հնչիւն): Հին Հայերէնի [ւ] հնչիւնը (IPA [w]), վաղուց արդէն վերածուել է [վ]ի: Այդ պատճառով, անգլերէնի յիշեալ երկու հնչիւնները մենք տառադարձում ենք միեւնոյն կերպ: Ինչպէս նշել ենք, տարբերութիւնը գալիս է Հայերէնի ուղղագրութիւնից (եւ երբեք՝ անգլերէնի հնչումից). այն կարող է ունենալ երեք արտայայտութիւն՝ «վ», «ւ», «ու»: Օրինակներ. *Virginia Woolf* Վիրջինիա Վուլֆ, *Vancouver* Վանքո(ւ)վր, *Steve Jobs* Սթիւ Ջոբս, *Pennsylvania* Փենսիլուանիա, *Nashville* Նաշվիլ («վիլ»ը առանձին բառ-բաղադրիչ է), *Providence* Պրովիդենս, *Denver* Դենվր, *William* Վիլիամ, *Wisconsin* Վիսքոնսին, *Wyoming* Վայոմինգ, *Washington* Վաշինգթոն, *Winchester* Վինչեստր, *Warwick* Վորուկ (թէեւ այս անուան մէջ երկրորդ «w»ն չի հնչում, միօրինակութեան համար Հայերէն այն գրում ենք, տե՛ս ստորեւ՝ կէտ ժը.), *Wight* Վայթ, *Worcester* Վուստր, *Welshpool* Վելշփուլ, *Ottawa* Ոթաա, *Wimbledon* Վիմբլդոն, *Wembley* Վեմբլի:

Ընդգծենք, որ անգլերէն [w]ն բաղաձայն է (որ լեզուաբանական թողտուութեամբ անուանում են նաեւ կիսաձայն¹⁴):

¹³ Չիմարէն հենց այդպէս էլ գրելու ենք՝ «ն»: Դրա մասին կը խօսենք չիմարէնին նուիրում յօդուածում:

¹⁴ «Կիսաձայն» կոչում տաւերը այդպէս են կոչում միայն նրա համար, որ տարբեր դիրքերում մերթ քաղաձայն կարող են լինել, մերթ՝ ձայնադուր եւ

Հայերէնին խորթ է բառասկզբի՝ սփիւռքահայերէնում արմատացած եւ սովետահայերէնում աւելի ու աւելի յաճախ հանդիպող «ու»ն. Ուաշինկթըն, Ուիլիւմ, Ուոթերգեյթ, Ուոուտը և այլն: Ձայնաւորից առաջ բառասկզբի «ու» գրութիւն դասական հայերէնը չունի: Այդպիսի գրութեան միակ պատճառաբանութիւնը անգլերէնի «v» եւ «w» բաղաձայնները ինչ-որ կերպ տարբերակելու ցանկութիւնն է, մի բան, որ անթոյլատրելի է սեփական լեզուն յարգող տառադարձութեան համար: Այդպիսի թիւր գրութիւնը երկու լուծում է առաջարկում. կա՛մ «Ուիլիւմ»ի «ու»ն արտասանել իբրեւ ձայնաւոր՝ [ու-ի-լի-ւմ], որ անհեթեթ է, կա՛մ անունը արտասանել «անգլիաւարի» [w-ի-լ(ի)-լըմ], այսինքն՝ հայերէնում բացակայ օտար հնչիւնով: Հենց սա է, որ անթոյլատրելի է. մենք չենք կարող հայերէնը վերածել եւ ամեն մեկին հաճոյանալու համար օտար հնչիւններ աւելացնել մեր լեզուի մէջ: Դա դուռ է բացում անհամար չարաչահումների առջեւ: Մի օր՝ անգլերէնի՝ մի նոր հնչիւն կը ներմուծենք, վաղը՝ արաբերէնի, երրորդ օրը՝ չինարէնի: Մենք արդէն յիշատակել եւ դատապարտել ենք թուրքերէնի եւ ֆրանսերէնի IPA [ø] հնչիւնը «էօ» երկտառով, ինչպէս նաեւ ռուսերէն բաղաձայնների փափկութիւնը ապաթարցով («») կամ «յ» տառով արտայայտելու փորձերը: Հիմա էլ անգլերէնի «w»ն:

Համեմատութեան համար՝ մասնաւորապէս յիշենք վրացերէնից եկած անունները (որոնց տառադարձութեանը կ'անդրադառնանք մի քանի յօդուած յետոյ): Հայերէնը վրացերէն [վ] հնչոյթը, որը շատ յաճախ նման է [w] արտաբերմանը, երբեք եւ ոչ մի դէպքում բառասկզբին «ու» չի գրել (Վախթանգ, ոչ թէ Ուախ-

թանգ): Նոյնը կարող ենք ասել եւ լատիներէնի «V»ի տառադարձման մասին, որը, ինչպէս յայտնի է, դասական (հին) լատիներէնում հնչում էր [w]: Այս դէպքում եւս, հայերէնը երբեք այն «ու»ի չի փոխել: Այս ամենը ասում ենք նրա համար, որ Հայ մասնագէտներին հեռու պահենք բառասկզբում «ու» գրելու գայթակղութիւնից, մի բան որ վերջին տարիներին շատ է տարածուել Հայաստանում, իսկ Սփիւռքում, ցաւօք, գրեթէ օրէնք է:

է) Անգլերէնի ձայնեղ «s»-երը երբեմն պէտք է հայերէն գրել «ս» եւ ոչ թէ «զ», մանաւանդ՝ յոգնակիի եւ սեռական հոլովի վերջաւորութիւնները. Bismarck Բիսմարք, Edmunds Եդմունդս, Hastings Հասթինգս, Jersey Ջերսի, News Նիուս, Times Թայմս, Charles Չարլս (Նիւզ, Թայմզ, Չարլզ ձեւերը ստուգաբանօրէն թերի են): Անգլերէնի յոգնակիի «s»-ն լծորդ է հայերէնի յոգնակիի «ս»-ին (ինչպէս՝ յանձինս, Մասիս, Մոկս), եւ հայոց լեզուն որոշ դիրքերում [ս] հնչիւնը աւելի է գերադասում: Պէտք է ուշադիր լինել:

ը) «X» երկհնչիւնը աւանդաբար ընդունուած է գրել «քս» (լինի այն մաքուր անգլիական, լատինական թէ յունական — սովորաբար այս վերջին երկու լեզուներից են), եւ ո՛չ հնչեղացած՝ «զք». Alexandria Ալեքսանդրիա, ոչ թէ Ալեքզանդրիա:

թ) Անգլերէնում երբեմն յայտնուող սկոտլանդերէնի¹⁵ [x] բաղաձայնը հայերէն գրում ենք «խ». Loch Ness Լոխ Նես: Սկոտլանդացիներն ու իրլանդացիները անգլիացիներին ծաղրական բառով երբեմն անուանում են Sasannach / Sassenach /

15 «Scot», «Scotia» անուանումը գալիս է լատիներէնից եւ հայերէն այն ճիշտ է գրել «սկոտ» (արեւմտահայերէն տառադարձութիւնը այսօր՝ «սքոթ»). «Սկոտլանդ», «սկոտլանդացի»: Սովետաֆայերէն «Օտլանդիա» ձեւը ռուսերէնի միջոցով եկած՝ գերմաներէն «sch»ի [շ] արտասանութեան արտացոլումն է: Հարեւան բոլոր ազգերը մրանց «սկոտ» ձեւով են ճանաչում: Ժամանակն է ուղղել սխալը:

Sasunnach (լատիներէն «սաքսոն» ցեղանունից), որ հայերէն կարող ենք տառադարձել «սասանախ»:

ժ) Մի երկու անուն-բաղադրիչի մէջ (*ham, hampton*) անգլերէնը չի արտասանում «հ» տառը: Առաջարկում ենք՝ հայերէն էլ տառը գրել, բայց չարտասանել՝ «համ», «համփթոն», ինչպէս եւ մենք էլ ունենք «աշխարհ, խոնարհ, շնորհ» ձեւերը, ուր «հ» տառը համար է: Դա վերականգնում է ստուգաբանութիւնը եւ միասնական տեսք է տալիս աշխարհագրական անուններին: Օրինակներ (այս յօդուածում այդ համար «հ»-երը դնում ենք փակագծերի մէջ). *Birmingham* Բիրմինգ(հ)ամ, *Nottingham* Նոթինգ(հ)ամ, *Buckingham* Բուքինգ(հ)ամ («ու»ն աւանդական է), *Durham* Դար(հ)ամ, *Oakham* Ոք(հ)ամ, *Northampton* (մեկ տառը երկու դեր է կատարում) Նորթ(հ)ամփթոն, *Southampton* Սաութ(հ)ամփթոն: Այս վերջին անունն մէջ, թէեւ «հ» տառը չի կրկնած, արտասանութիւնը երբեմն շեշտում է այն՝ [*sauθ'hæmptən*]:

	ա	ա	ե	ի	ո	ու	ը **
կարճ	[ʌ]	[æ]	[e]	[ɪ]	[ɒ] / [ɑ]*	[ʊ]	[ə]
երկայն	[ɑ:]	—	—	[i:]	[ɔ:]	[u:]	[ɜ:]
* ամերիկեան արտասանութիւն. <i>hot, odd, not</i> (տե՛ս վերը եւ ստորեւ):							
** «ը» ձայնաւորը, ինչպէս արդէն բացատրել ենք, հայերէնում գրում ենք միայն բառասկզբին եւ միավանկ բառերի մէջ (դրա տառադարձումը տե՛ս ստորեւ):							

Կարճ ձայնաւորների տառադարձման օրինակներ. [ʌ] *cut* քաթ, [æ] *bad* բադ, [e] *bed* բեդ, [ɪ] *ship* շիփ, [ɒ] *pot* փոթ, [ʊ] *put* փութ, [ə] *ago* ըգո: Երկայն ձայնաւորների օրինակներ. [ɑ:] *calm* քա(լ)մ, [i:] *sheep* շիփ, [ɔ:] *paw* փո, [u:] *boot* բութ, [ɜ:] *bird* բիրդ:

Յատուկ ուշադրութեան է արժանի [œ] ձայնաւորը, որը ականջի համար [ա]ի եւ [ե/է]ի միջին դիրքն է զբաղեցնում: Սովետահայերէնում (եւ ռուսերէնում) դա վերջին կէս դարում ընդունուած է տառադարձել «ե/է». *champion* / чемпион / չեմ-

ժա) Անգլերէնի, ինչպէս եւ որեւէ այլ օտար լեզուի կրկնակ բաղաձայնները հայերէն գերադասելի է արտայայտել մեկ բաղաձայնով, մանաւանդ որ անգլերէնում էլ դրանք աւելի յաճախ մեկ ձայնով են հնչում. *Tallahassee* Թալահասի, *Dallas* Դալաս, *Hollywood* Հոլիվուդ, *Cheyenne* Շայեն, *Winnipeg* Վինիփեգ, *Minnesota* Մինեսոթա, *Mississippi* Միսիսիպի (Ֆրանսերէնից է, դրա համար է «պ»ով), *Haddington* Հադինգթոն, *Jefferson* Ջեֆերսոն, *Harrisburg* Հարիսբուրգ, *Manhattan* Մանհատթան, *Cardiff* Բարդիֆ, *Kissinger* Քիսինջըր, *Schwarzenegger* Շուարցնեգ(ե)ր:

ժբ) Ձայնաւորները: Անգլերէնը տարբերում է կարճ եւ երկայն ձայնաւորներ (որ երկրէ երկիր հնչումի տարբերութիւններ են տալիս), սակայն հայերէնը դրանք տառադարձում է միակերպ: Ստորեւ՝ դրանց յարաբերութիւնը եւ հայերէն համարժէքները:

պիոն, *kangaroo* / кенгуру / կենգուրու, *Gallup* / Гэллан / Գելլափ: Սակայն պատմականօրէն այդպէս չի եղել. *Manchester, Kansas, Alfred, Chaplin* գրել ենք «ա»ով:

Ե՛ւ մեր աւանդական տառադարձութիւնը, ե՛ւ անգլերէնի պատմութիւնը, ե՛ւ ստուգաբանութիւնը, ե՛ւ ոչ լատինագիր այլ լեզուների օրինակը մեզ յուշում են, որ այդ ձայնաւորը պէտք է գրել «ա»¹⁶: Պատ-

16 Մենք դրա մասին խօսել ենք նաեւ արաբերէնի, պարսկերէնի եւ թուրքերէնի առաջնային [ա] ձայնաւորի կապակցութեամբ: Տե՛ս մեր յօդուածաշարքի Ա. մասը (մերձաւորարեւելեան լեզուներ):

մականորէն այն գալիս է միջին անգլերէն [ա]ից, գերմանական այլ լեզուներում այն [ա] է, եւ լատինագիր այլ ժողովուրդներ էլ, օրինակ՝ ֆրանսացիները, այն իրենց [ա]ին են լծորդում ու արտասանում: Հակառակ ուղղութեամբ, անգլիացիները այլ լեզուների (լատիներէն, յունարէն...) շատ [ա]եր իրենց [æ]ով են արտայայտում (Abraham, bank, camera, fact, gaz, madam, magazine, palace, sabbath, talisman): Ուստի աներկբայ է, որ [æ]ն «a»ի համարժէքն է, եւ հայերէն այն «ա» պէտք է տառադարձենք (ինչպէս եւ այսօր ունենք արեւմտահայ տառադարձութեամբ): Օրինակներ. Harrisburg Հարիսբուրգ, Lansing Լանսինգ, Alabama Ալաբամա, Nashville Նաշվիլ, Dallas Դալաս,

Angus Անգուս, Thatcher Թաթչըր, Michael Jackson Մայքլ Ջաքսոն, Manhattan Մանհատան, Andrew Անդրու, David Cameron Քամրոն, Francis Ֆրանսիս, Jack (Ֆրանս. Jacques) Ջաք (աւանդական անուններում Յակոբ), Harry Truman Հարի Թրուման (խոտելի է «man» բաղադրիչի սովետահայերէն «մեն»ը), Gallup Գալուպի:

Ժգ) Անգլերէնի երկբարբառներն ու եռբարբառները, թէեւ առաջին հայեացքից քանակով շատ, եւ անփորձ հայ ականջի համար անյաղթահարելի կարող են թուալ, իրապէս սահմանափակ են եւ տառադարձութեան համար լիովին յաղթահարելի: Ահա դրանք

1	2	3	4	5	6
երկբարբառներ			եռբարբառներ		
բաղադրիչն	+ i	+ u	+ ə(r) **	+ ɪə(r) **	+ uə(r) **
[a]	[aɪ] ալ	[aʊ] աւ	–	[aɪə] ալր	[aʊə] աւր
[æ]	–	–	–	–	–
[e]	[eɪ] ե/է	–	[eə] եր	[eɪə] եր	–
[ɪ]	–	–	[ɪə] իր	–	–
o [ɔ/ə]	[ɔɪ] ոլ	[əʊ]* ո(վ)	–	[ɔɪə] ոլր	[əʊə] ո(վ)ր
[ʊ]	–	–	[ʊə] ուր	–	–
* ամերիկեան հնչումը կա՛մ [ou] է, կա՛մ երկայն [ō]. old, oat, low, toe:					
** ամերիկացիները ամենուր արտասանում են [r] հնչիւնը:					

Ամեն սիւնակի երկբարբառ հնչիւնները բաղկացած են ձախ (1ին) սիւնակի ձայնաւորին աւելացնելով վերին տողի բաղադրիչները: Եռբարբառները (Տրդ եւ Տրդ սիւնակները) 2րդ եւ 3րդ սիւնակների երկբարբառների եւ [ə(r)] բաղադրիչի համակցութիւնից են յառաջացել:

Ինչպէս տեսնում ենք, «r»ով վերջացող ու երկբարբառների եւ եռբարբառների դէպքում բրիտանական գրական անգլերէնը չի արտասանում այդ բաղադայնը, այն հնչեցնելով իբրեւ [r]: Ամերիկեան ընդհանուր անգլերէնը (General American) դրանք ընդհակառակը՝ ամենուր արտասանում է, եւ փաստօրէն զուրկ է եռբարբառներից:

Հայերէն տառադարձութիւնը վերականգնում է [r] հնչիւնը եւ այդպիսով ոչ միայն մօտենում է ստուգաբանութեանը, այլեւ խոստափում ձայնաւորների ու կիսաձայնների կուտակումից:

Փաստօրէն՝ անգլերէնն ունի հինգ պարզ (առանց [r]ի) երկբարբառ, հայերէնն ունի եօթ երկբարբառ («այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, ւո») ¹⁷, որոնցից կարող ենք ասել, որ միայն երեքն են իրար համարժէք (այ, ոյ, աւ): Ասել է թէ՛ ամեն լեզու ունի երկբարբառների ի՛ր հոյլը ունի եւ բնաւ ի-

17 Խօսքն այստեղ փայտէնի գրաւոր երկբարբառների մասին է:

մաստ չունի մեկը միևսի չափանիշներով չափելը:

ժգ-ա) Անգլերենի միակ երկբարբառը, որ հայերեն իր յստակ համարժեքն ունի [ai]ն է, որ գրում ենք «այ»։ Idaho Այդահո, Wyoming Վայոմինգ, Ohio Ոհայո, Iowa Այովա, Carlisle Քարլայլ, Isle of Wight Վայթ կղզի, Dwight Դուալթ, Michael Մայքլ, Times Թայմս:

ժգ-բ) Պարզ երկբարբառներից [ei]ի վերաբերեալ պետք է ասել հետեւեալը: Հայերէնում չկայ [ej] երկբարբառ, ուստի անգլերէն [ei]ը տառադարձում ենք «ե/է»: Այդպիսի տառադարձութիւնը նոր չէ, եւ հնում էլ (նոյնիսկ խորհրդային տարիներին) մենք գերադասութիւնը տուել ենք պարզ «ե/է»ին. Shakespeare¹⁸ Շեքսպիր, Cambridge Քեմբրիջ, Bacon Բեկոն, James Զեմս, Davis Դեյվիս, David Դեյվիդ, Mark Twain Մարկ Տվեյն, Wales Ուելս¹⁹, cakes կեքս, my lady [mi'leidi]] միլեդի (այստեղ «my»ն միջին անգլերէն արտասանութեամբ է հնչում. «my lord» [mi'lo:d] «միլորդ»): Եւ դա ճիշտ է ոչ միայն հայերէնի ուղղագրութեան տեսանկիւնից նայած, այլեւ հայ մարդու բնական արտասանութեան հակումից: Հանրայայտ անուններում ժողովուրդը խոսափում է [ej] արտասանութիւնից, ինչպէս «Շվեյցարիա» երկրանունն մէջ, որ հայաստանցիների մեծ մասը արտասանում է [շվեցարիա], կամ Glendale, որ հայաստանցիների ու ամերիկահայերի մի զգալի մասը արտասանում է «Գլենդեյլ»:

Ուստի՝ հայերէնի ուղղագրութեան, ինչպէս նաեւ աւանդական, տեսանկիւնից՝

միակ ճիշտ ձեւը «ե/է» գրելն է. Drake Դրեք, Blake Բլեք, Yale Յեյլ, Faraday Ֆարադէ, Hemingway Հեմինգվէ, Broadway Բրոդվէ, Theresa May Թերեզա Մէ, Reagan Ռեգան, Bill Gates Բիլ Գեթս, Daily Mirror Դեյլի Միրոր, Mark Twain Մարկ Թուեյն: Հայերէնը բնաւ չի տուժում այդպիսի արտասանութիւնից (Ֆրանսացիներն էլ են այդ անունները առանց [j]ի արտասանում):

Ինչ վերաբերում է բառավերջի «ey» տառակապակցութեանը, ապա բոլորովին սխալ է սովետահայերէնի նրա «եյ» տառադարձումը, ինչպէս՝ Sydney Սիդնեյ, hockey հոկեյ: Դա բացայայտ ուսերէնին անսացող տառադարձութիւն է (Сидней, хоккей), քանզի ուսերէնին յարմար է բառավերջին «ն» («յ») աւելացնելը՝ բառերին ուսերէնին յարմար հոլովական վերջաւորութիւն տալու նպատակով: Հայերէն ճիշտ տառադարձումը կը լինի՝ Հոքեյ, Սիդնի: Ինչպէս նաեւ՝ New Jersey Նոր Ջերսի, Surrey Սարի, Orkney Որքնի, Walt Disney Դիսնի, Anglesey Անգլսի:

ժգ-գ) Անգլերէնի [ɔi] երկբարբառը տառադարձում ենք «ոյ», ինչպիսի դիրքում էլ այն յայտնուի եւ ինչ վերջնական արտասանութիւն ունենայ: Հայերէն հնարաւոր է կարդալ ե՛ւ [ոյ], ե՛ւ [ույ], եւ չենք կարծում թէ հայերէնը պէտք է նեղուի դրանից: Անգլերէնը չունի [ույ] երկբարբառ, ուստի եւ շփոթութեան առիթ նոյնիսկ չկայ: Օրինակներ. Roy Ռոյ, Illinois Իլինոյ (հնարաւոր է նաեւ Ֆրանսերէնից տառադարձում՝ Իլինուա), Detroit Դետրոյտ (հնարաւոր է նաեւ Ֆրանսերէնից՝ Դետրուա. վերջին այս երկուսը ակնյայտօրէն ֆրանսերէն են), Oyster Bay Ոյստր Բէյ, Toynbee Թոյնբի, Boyne Բոյն:

ժգ-դ) Գալով [au] երկբարբառին, ստուգաբանօրէն այն համապատասխան է հայերէն «աւ»ին (յիշելով որ հին հայերէնում «ւ»ը [w] հնչում ունէր): Մենք հա-

¹⁸ Անգլերէնը մի ժամանակ գրել է նաեւ Shakspeare (տե՛ս H.W.Fowler, *A Dictionary of Modern English Usage*, Oxford University Press, Oxford 1986, Shakspeare-Shakespeare) յօդուածը):

¹⁹ Օրինակները քաղել ենք մասնատրապէս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուից, էջ 179-181:

Լանոլթիլն չենք տալիս լայնօրէն տարածուած «առ» տառադարձութեանը: Նախ՝ «առ»-ն երկու ձայնաւոր է (հակառակ անգլերէնի «ձայնաւոր + կիսաձայն» զոյգի), եւ հայերէնում այն անհրաժեշտաբար հնչելու է [ա-ռ]: Երկրորդ՝ քերականական յօրանջը կոտրելու հայերէնի արտասանական հակումը վաղ թէ՛ ուշ յանգեցնելու են դրանց միջեւ անջատիչ մի բաղաձայնի տեղադրութեան (ինչպէս *oat* [առուտ] / [ափուտ]): դասական հայերէնն էլ ունի բազմաթիւ օրինակներ՝ Աբրահամ, Լաւոդիկէ, Միքայէլ...): Թէեւ հայերէն «առ» ձեւը վերջին հաշուով փոքր ինչ այլ է հնչում, քան անգլերէն «*oat*»-ը, այն միակ ճիշտ ձեւն է ե՛ւ ստուգաբանօրէն ([w] = [l]), ե՛ւ շեշտադրութեամբ, ե՛ւ վանկերի քանակով: Ընդունում ենք, որ միշտ չէ, որ կարող ենք գոհացուցիչ լուծում գտնել: Բոլոր լեզուները իրենց սահմանափակումներն ունեն: «Առ» գրելու տրամաբանութիւնը, ինչպէս եւ բառակցբին «ռ» գրելը (տե՛ս վերը), բերում է անհեթեթ երկընտրանքի. կա՛մ արտասանել երկու ձայնաւոր եւ շեշտը հարկադրաբար դնել երկրորդի վրայ [ա-ո՛ւ], կա՛մ բառը արտասանել անգլերէն (օտար) հնչողութեամբ [ա+w], որը նոյն բանն է, թէ՛ բառը բնաւ չտառադարձենք, թողնենք լատինատառ եւ այդպէս էլ գրենք հայերէն գրաշարքի ներսում (օր.՝ «Washington-ը թաղուած է Mount Vernon-ում», փոխանակ՝ «Վաշինգթոնը թաղուած է Մաւնտ Վերնոնում»): Այսպիսի խեղ տառադարձութիւնը յատուկ է սովետահայերէնին, ուր ռուսերէն անունները գրում են հայերէն տառերով, բայց արտասանում ռուսերէն հնչողութեամբ («Լերմոնտով»/[լ'ե՛ռմընտով]):

«Աւ» տառադարձութեան օգտին են խօսում նաեւ հին յունարէնի եւ լատիներէնի օրինակները. «*κένταυρος*, *centaurus*» հայերէն գրում ենք «կենտաւրոս» (եւ ոչ «կենտաուրոս»), ինչպէս նաեւ՝ Աւիս,

Աւգիաս, Աւրելիոս, Տաւրոս, Կղաւղիոս, Պաւղոս:

Ուստի՝ *Down* Դաւն, *Eisenhower* Այզհաւեր, *South* Սաւթ, *mountain* մաւն-տան, *steakhouse* սթեքհաւս:

Ժգ-ե) Եւ վերջին՝ [əv] երկբարբառը: Այն երկու տառադարձութեամբ կարելի է գրել՝ «ո» կամ «ով»: Անունների մեծ մասում, հաշուի առնելով նաեւ, որ ամերիկեան անգլերէնը այդ երկբարբառը շատ ու շատ դէպքերում վերածել է երկայն [ō] պարզ հնչիւնի (ինչպէս՝ *old*, *oat*, *low*, *toe* – երբեմն հնչիւնագրում են նաեւ [ou] երկբարբառով), հայերէն ճիշտ կը լինի այն տառադարձել պարզ «ո»-ով, մանաւանդ որ ստուգաբանօրէն այն շատ ու շատ դէպքերում այլ լեզուների «o»-ին է համապատասխանում: Օրինակներ. *Kodak* Քոդաք, *Ohio* Ոհայո, *Dakota* Դաքոտա, *Fresno* Ֆրեսնո, *Mold* Մոլդ, *Broadway* Բրոդվէյ, *Oakham* Ոք(հ)ամ:

Երկրորդ, աւելի մասնաւոր դէպքն է «ով» տառադարձումը: Դա թոյլատրելի է այն դէպքերում, երբ գրութեան մէջ ունենք «ow» կապակցութիւնը: Աւանդական տառադարձութիւնը այստեղ էլ ունի պարզ «ո» (*Woodrow* Վուդրո, *Glasgow* Գլազգո), սակայն հնարաւոր ենք համարում եւ «ով» գրելը. *Linlithgow* Լինլիթգով, *Lowlands* Լովլանդս, *show* շով:

Թիւր տառադարձութեան օրինակ է *Bernard Shaw* սովետահայերէն՝ Բեռնարդ Շոու, որ պէտք է լինի Բերնարդ Շո:

Ժգ-դ) Մնացեալ երկբարբառներն ու եռաբարբառները ածանցեալ են [r]ի յաւելումով եւ այդպէս էլ պէտք է տառադարձուեն. *Delaware* Դելաւեր, *Nairn* Ներն, *Fairfax* Ֆերֆաքս, *Shakespeare* Շեքսպիր, *Cheshire* Չեշիր, *Moore* Մուր, *Firestone* Ֆայրսթոն, *Empire State Building* Եմփայր Սթեյթ Բիլդինգ, *player* փլեր, *Tom Sawyer* Թոմ Սոյլը (լը)ն կարելի է արտասանել, բայց ոչ՝ գրել, *Tower* Թաւը (սովետահա-

յերէն՝ «Թաուեր»), Eisenhower Այգնհաւը, Flower Mound Ֆլաւը Մաւնդ, lower լովը:

ժդ) Անգլերէնի ամերիկեան հնչման տարբերութիւնները (բրիտանականից) կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինը այն տարբերութիւններն են, որ նոյն տառադարձումն ունեն, ինչ եւ բրիտանական անգլերէնը (դրանք մեծամասնութիւնն են):

Վերը՝ Անգլերէնի հնչոյթներն ու հնչիւնները բաժնուծ, նշել ենք ամերիկեան մի քանի առանձնայատկութիւն: Դրանք տառադարձում ենք այսպէս:

[f] հնչիւնը գրում ենք ամենուր, մի կողմից յարգելով ստուգաբանութիւնը, միւս կողմից միաւորելով բրիտանական եւ ամերիկեան ճիւղերը, եւ վերջապէս ընթանալով նոյն տրամաբանութեամբ, ինչ եւ այլ լեզուներն ու ժողովուրդները: Bismarck Բիսմարք, New York Նիու Յորք, Cardigan-shire Քարդիգանշիր, Bedford Բեդֆորդ, Yorkshire Յորքշիր, Ernest Երնեստ:

Բրիտանական [v] / ամերիկեան [a] հնչիւնը տառադարձում ենք հայերէն «ո»։ «blond»-ը գրում ենք «բլոնդ» եւ ոչ թէ «բլանդ» ինչպէս կը կարծէին ամերիկահայերից շատերը: Boston Բոսթոն, Hollywood Հոլիվուդ, Concord Կոնկորդ, Wisconsin Վիսքոնսին, Ronald Ռոնալդ, Robert Ռոբերտ, Rockefeller Ռոքֆել(ե)ր:

Բրիտանական [ɑ:] / ամերիկեան [æ] տալիս են միեւնոյն տառադարձումը՝ «ա»։ յիշեցնենք, որ ճիշտ է սովետահայերէնի «ե» տառադարձումը (լրագրային ռուսերէնի ազդեցութեամբ²⁰)։ Bath Բաթ, New-castle Նիուքասլ, Belfast Բելֆասթ:

Բրիտանական [ʌ] / ամերիկեան [ə] հնչիւնը գրում ենք «ա»։ Augusta Ոգաս-

տա, Dumfries Դամֆրիս, Surrey Սարի, Rutland Ռաթլանդ:

Բրիտանական [əʊ] / ամերիկեան [ou]/ [ō] երկբարբառը գրում ենք պարզ «ո» կամ «ով» (եթէ դրան յաջորդում է «w» տառը)։ Juneau Ջունո, Broadway Բրոդվէ, Idaho Այդահո, Fresno Ֆրեսնո, Ohio Ոհայո (տե՛ս նաեւ վերը):

Եռաբարբառները, [r] հնչիւնը ամենուրեք գրելու տրամաբանութեամբ, արտայայտում ենք «երկբարբառ + [r]» տառադարձութեամբ։ Delaware Դելաւեր, Fairfax ֆերֆաքս, Firestone Ֆայրսթոն:

Բոլոր տարբերութիւնները չենք նշում: Կան նաեւ շեշտի տարբերութիւններ, որ հայերէն տառադարձութիւնը նոյնպէս չի արտացոլում:

Երկրորդ խումբը այն որոշակի առանձնայատկութիւններն են, որոնց հետ պէտք է հաշուի նստել, սակայն որոնք բարեբախտաբար սակաւաթիւ են եւ ոչ էական:

Օրինակներ. schedule / բրիտ. շեդիուլ, ամեր. սքեջուլ, vitamin / բրիտ. վիթամին, ամեր. վայթամին, lieutenant / բրիտ. լեֆթենանտ, ամեր. լութենանտ: Այս օրինակների մէջ, ինչ խօսք, զանց ենք առել այլ լեզուներից ծագած լինելու հանգամանքը, ինչը իսկական տառադարձութեան ժամանակ անշուշտ պէտք է հաշուի առնել:

Կարճ ասած՝ անհրաժեշտ է գտնել այնպիսի ձեւեր, որոնք, առանց հակադրուելու ստուգաբանութեանն ու հայերէնի կանոններին, միաւորեն անգլերէնի երկու ճիւղերը եւ անունները մեկ տառադարձութեամբ ներկայացնեն:

ժե) Անգլերէնի արտասանական շեշտը շարժուն է՝ կարող է ընկնել որեւէ վանկի վրայ եւ ածանցեալ բառերում իր տեղը փոխել: Ինչպէս մի քանի այլ լեզուներինը (գերմաներէն, ռուսերէն...) այդ շեշտը աւելի ուժեղ է, քան հայերէնինը, եւ այդ

²⁰ Ռուսերէնի ճշմարիտ տառադարձութիւնը ինքն է խորշում [ե]ից եւ նախընտրում է [ա]ն: Տե՛ս А. Р. У. Рум, Л. В. Колесников, Г. А. Пасечник и др., Великобритания, лингвострановедческий словарь, изд. второе, Москва, Изд. «Русский язык», 1980, стр. 469:

պատճառով ազդում է միևս վանկերի ձայնաւորների վրայ: Դա բերում է նրան, որ շատ վանկերի անշեշտ ձայնաւորներ թուլանում են (կոչւում է ձայնաւորների թուլացում՝ *vowel reduction*), կորցնում իրենց սկզբնական լիարժէք հնչումը եւ այդ դիրքերում արտասանում ինչպէս հայերէն [ը]ն. *Sutherland* ['sʌðələnd], *Lincolnshire* ['lɪŋkənʃə], *Gallup* ['gæləp], *proprietor* [prə'praɪətə]: Այս [ə] ձայնաւորի տառադարձումը նուրբ հարց է:

Արեւմտահայերէնը Սփիւռքում այս հարցում հետեւում է կիլիկեան գրութեանը եւ միտում ունի շեշտազուրկ այդ «անորոշ» ձայնաւորները գրել «ը». *William* Ուիլիւմ, *Churchill* Չըրչիլ, *Boston* Պոսթըն, *Biden* Պայտըն: Սովետահայերէնը Հայաստանում (անկասկած՝ ռուսերէնի ազդեցութեան տակ) այսօր գրում է Ուիլյամ, Չերչիլ (ռուս. Чёрчиль), Բոստոն, Բայդեն (բայց արտասանում [բա՛յ-դըն]):

Նախ՝ նշենք, որ ամեն լեզու ունի իր ուրոյն շեշտադրութիւնը, եւ օտար անուններն էլ վերջին հաշուով ենթարկւում են փոխառու լեզուի հասարակ անունների շեշտադրական կանոններին: Հայկական ազգանունները, օրինակ՝ անգլերէն հնչում են շեշտը նախավերջին վանկի վրայ դրած՝ *Saroyan* [sə-'rɔːjən], *Kerkorian* [kɜr-'kɔːrjən], ինչպէս հնչում են *Australian*, *Canadian* եւ նման բառերը:

Հայերէնի համար մենք պէտք է փնտռենք այնպիսի ձեւեր, որ հարազատ լինեն հայերէնի դասական ուղղագրութեանը: Մենք երկու տեսակի մօտեցում կ'առաջարկէինք:

Նախ՝ իբրեւ ընդհանուր կանոն: Բառամիջում «ը» գրելը խորթ է հայերէնին, եւ մենք ճիշտ կ'անէինք, եթէ անտեսէինք ձայնաւորների այդ թուլացումը ու վերականգնէինք անգլերէնի սկզբնական լիարժէք ձայնաւոր կամ երկբարբառ հնչիւնները (նոյն ձայնաւորը, որով եւ ուղղագրած

է լատինատառ անունը)՝ «ա, ե/է, ի, ո, ու...»: Օրինակ. *Winston* Վինսթոն, *Kirk Kerkorian* Քիրք Քերքորեան (եւ ոչ թէ այսօրուայ Քըրք Քըրքորյան ձեւը, որ տպած է իր անունով թողարկած նամականիշի վրայ), *Churchill* Չուրչիլ: Այս վերջին անունան համար նշենք, որ ռուսերէնի ազդեցութեան տակ չգտնուող ոչ լատինատառ լեզուներից բուլղարերէնը գրում է Чърчил («ը»ով), նոր յունարէնը՝ Τσώρτσιλ/Τσόρτσιλ («ո»ով), հնդկերէնը चर्चिल (*charchil*) Չըրչիլ/Չարչիլ արտասանութեամբ: Սովետահայերէնն ուրեմն թիւր տառադարձութիւն է, աւանդ՝ այնքան տարածուած այսօր Հայաստանում: Այսօր բնականաբար խորթ կը թուայ Հայաստանցու ականջին Չուրչիլ ձեւը, որովհետեւ նա արդէն տասնամեակներ շարունակ [չերչիլ] է լսում: Մենք պէտք է այնուամենայնիւ աշալուրջ լինենք՝ ապագայում այդպիսի սխալներ թոյլ չտալու համար:

Ինչ վերաբերում է վերջին վանկի թուլացած ձայնաւորներին, այստեղ հարցը աւելի է բարդանում: Ե՛ւ լիաձայն, ե՛ւ թուլացած ձեւերը իրենց արդարացումն ունեն: Լիաձայնը յարմար է ուղղագրութեան տեսանկիւնից, սակայն պահանջում է, որ շեշտը վերջավանկ լինի՝ Բա՛յդեն: Թուլացածը յարմար է շեշտադրութեան տեսանկիւնից, սակայն «ը» տառը աւելորդ է: Վերջին վանկի [ը]ի գրել չգրելու հարցը տարբեր է զանազան լեզուներում: Ունենք՝ յունարէն՝ Ἀλέξανδρος, Περίανδρος, լատիներէն՝ *Alexander*, *Periander*, անգլերէն՝ *Alexander*, *Périander*, ֆրանսերէն՝ *Alexandre*, *Périandre*, ռուսերէն՝ *Александр*, *Периандр*, հայերէն՝ Աղեքսանդր, Պերիանդր(ոս): Այսինքն՝ մեկը գրում է ձայնաւորով, մեկը՝ առանց ձայնաւորի: Հայերէնի «Աղեքսանդր» ձեւը մեզ ենթադրել է տալիս, որ առանց ձայնաւորի գրութիւնը ընդունելի է բառավերջում եւ ճիշտ կը լինէր ե՛ւ ուղղա-

գրական, ե՛լ շեշտադրական առումներով (նման մեր «գուատ[ը]ր, փոք[ը]ր, թանձ[ը]ր, աստ[ը]ղ, արկ[ը]ղ, ակ[ը]ն» բառերին): Իսկապէս, մենք ունենք, օրինակ՝ «Հայդն» տառադարձում (գերմ. *Haydn*) եւ այն չեշտում ենք առաջին վանկի վրայ (քանզի գաղտնավանկ [ը]ն չեշտ չի ընդունում): *Biden*-ի պարագայում վարանում ենք, քանզի լատինագիր պատկերը մեզ երկմտեցնում է:

Մենք կ'առաջարկէինք այսպիսի մօտեցում:

Առաջին՝ լիարժէք ձայնաւորներով գրել «a/ա, i/ի, o/ո, u/ու» եւ երկբարբառ դէպքերը: Սրանց սղումը տարօրինակ կը լինէր բառի մէջ. *Clackmannan* Քլաքմանան, *Birmingham* Բիրմինգ(հ)ամ, *Firth* Ֆիրթ, *Lennon* Լենոն, *Emerson* Եմերսոն, *Hillary Clinton* Հիլարի Քլինթոն, *Grangemouth* Գրենջմութ:

Երկրորդ՝ վերջին վանկի լատինական համը «e»ն չգրել («-er, -en, -le» կապակցութիւնների մէջ), այսինքն՝ այդպիսի աւանդները գրել առանց ձայնաւորի՝ նման *Alexander* Ալեքսանդր կամ արդէն աւանդոյթ դարձած արեւելահայերէն *Manchester* Մանչեստր (արեւմտահայերէն՝ Մանչեսթըր) տառադարձութեան: Օրինակներ. *Webster* Վեբստր, *Carter* Քարթր, *Leicester* Լեստր, *Thatcher* Թաթչը, *Cooper* Քուփր, *Faulkner* Ֆոլքնը, *Eisenhower* Այզենհաւը (երկու բաղադրիչների երկու վերջաւորութիւնները), *mister* միստր, *Biden* Բայդն, *Little Rock* Լիթլ Ռոք (անգլերէնն այստեղ ձայնաւորը բաղաձայնից յետոյ է գրում), *Turtle Bay* Թուրթլ Բէ (առաջինը՝ լիարժէք, վերջինը՝ [ը]), *Michael* Մայքլ (որովհետեւ այստեղ «ae» = «e», չենք գրի Մայքալ/Մայքահի):

Մենք հասկանում ենք, որ այստեղ առաջ ենք քաշում մի բացառութիւն, որը կարող է դժուարութիւններ ծնել: Արդեօ՞ք մեր մասնագէտները կը կարողանան հետե-

ւել այս կանոնին: Համոզուած չենք. եւ հարցը դնում ենք քննարկման:

Միավանկ անունների դէպքում լիարժէք գրութիւնն անխուսափելի է. *sir* սիր²¹: *husband* ենք համարում ե՛լ տարածուած (սակայն՝ նորամուտ) «սըր» ձեւը, ե՛լ ռուսակերպ (աւելի հազուադէպ) «սեր» ձեւը: Ձայնաւորն ինքը յուշում է մայր լեզուի՝ ֆրանսերէնի սկզբնական հնչումը, եւ ոչ մի շփոթմունք չի կարող լինել ֆրանսերէն *sire* սիր բառի հետ (նախորդը սրանից է ածանցեալ): Լատինագիր այլ լեզուներ էլ (իտալերէն, սպաներէն...) երկու բառերը նոյն կերպ են արտասանում:

Ժգ) Կիսաձայն [j]ն հանդիպում է ձայնաւորից առաջ՝ բառասկզբին կամ բառամիջում: Ինչպէս արդէն նշել ենք, համաձայն հայերէնի ուղղագրական կանոնների, այն տառադարձում ենք՝ բառասկզբին «յ» տառով, բառամիջում՝ «ի»ով:

«New York»ը [njʊ: jɔ:k / jɔ:rk] սովետահայերէն տառադարձած է «Նյու Յորք», արեւմտահայերէն՝ «Նիւ Եօրք/Եորք»: Դասական ուղղագրութեան ջատագովները յաճախ են վիճաբանում, թէ [յ] հնչումը «եօ» պէտք է գրել, թէ «եո»: «Եո» գրութեան կողմնակիցները փորձում են ազատուել կիլիկեան տառադարձմանը յատուկ ամենուր «օ» գրելու սովորութիւնից: Սակայն մոռանում են, որ հայերէնը չունի «եո» երկբարբառ, եւ փաստօրէն՝ «եո» գրութիւնը նոյն կիլիկեան մօտեցումն է, այն է՝ [յ] հնչիւնը ձայնաւորից առաջ արտայայտել «ե» տառով:

«York» անուան դասական տառադարձութեան միակ ճիշտ ձեւը «Յորք»ն է՝ [յորք] արտասանութեամբ (եւ ոչ [հորք]): Ինչ վերաբերում է «New» բաղադրիչի

21 Էդուարդ Աղայեանի բառարանը հենց այն ձեւն ունի (մեկնութիւնը՝ «պարոն (Անգլիայում)»): Տե՛ս Է.Բ. Աղայան, *Արդի հայերէնի բացատրական բառարան*, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, «սիր» բառի տակ:

տառադարձութեանը, ապա հայերէնի ուղղագրական կանոնների համաձայն՝ [յու] հնչումը բառամիջում (բաղաձայնից յետոյ) գրում ենք «իու»՝ Նիու: Ուստի՝ «Նիու Յորք» ձեւը դասական կանոններով միակ ճիշտ տառադարձումն է: Եւ հենց այս ձեւն էլ կ'առաջարկէինք ընդունել որպէս միացեալ հայերէն ձեւ:

Այլ օրինակներ. yankee յանքի, Yosemite Թոսեմիթի, Yukon Թուքոն, Indiana Ինդիանա, William Վիլիամ, Harriet Հարիետ, San Antonio Սան Անտոնիո, Merion (Station) Մերիոն, Beauty Lake Բիուլթի լիճ:

Ժէ) Անգլերէնում «al» գրութիւնը տարբեր արտասանութիւններ կարող է ունենալ: Եթէ երկու տառերն էլ իրենց հնչումն ունեն (ձայնաւորը թէկուզ եւ թուլացած), տառադարձումը միատեսակ է՝ «ալ»: Ralph Ռալֆ, Ronald Ռոնալդ:

Սակայն անգլիացիները յաճախ գրում բայց չեն արտասանում «L» տառը. Lincoln, Faulkner, Suffolk, Norfolk: Աւանդոյթն ուղում է (եւ մենք համաձայն ենք) հայերէն գրել «լ» տառը. Լինքոլն, Ֆոլքներ, Սաֆոլք, Նորֆոլք: Անշուշտ՝ սա վերականգնում է ստուգաբանութիւնը: Բայց, օրինակ՝ յունարէնը գրում է Φάκνερ, բուլգարերէնը՝ Фокнер: Արժէ խորհել:

Հարցը բարդանում է, երբ «a» տառը հնչում է [ɔ]: Աւանդոյթը այստեղ խառն է՝ երբեմն տառադարձում են «ալ», երբեմն՝ «ու»: Միօրինակութիւն մտցնելու խորհր-

դով, մենք առաջարկում ենք ամենուրեք գրել «ալ», քանզի դա է ստուգաբանութիւնը: Օրինակ՝ Montreal անունը ֆրանսերէնից է (վերջաւորութիւնը անգլերէն հնչում է [-ոլ]), կամ՝ Raleigh անունը հնչում է ե՛ւ [ռա-], ե՛ւ [ռո-], կամ՝ wall բառը գալիս է լատիներէնից եւ գերմաներէնում ունի իր Wall համարժէքը ([վալ] արտասանութեամբ), Pall-Mall անունը երեք արտասանութիւն ունի՝ [pæl'mæl], [pæl'mel], [pɔ:l'mɔ:l]:

Հետեւաբար՝ Albany Ալբանի, Galsworthy Գալսուորդի, Walpole Վալփոլ, Walt Վալթ, Wall Street Վալ Սթրիթ, Cornwall Կորնուալ, Dingwall Դինգուալ, Kirkwall Գիրքուալ, Aldrich Ալդրիչ, Wallace Վալաս, Waldorf Վալդորֆ: Walker անունը, որտեղ ե՛ւ «a»ն է փոխել իր հնչումը, ե՛ւ «l»ն է համրացել, կը տառադարձէինք «Վալքը»:

Այսպիսով՝ միօրինակութիւն կը մտցնէինք. «լ»ն միշտ գրում ենք, «a»ն գրում ենք «ա»:

Ժը) Անգլերէն յատուկ անունները յաճախ ունեն վերջաւորութիւններ եւ բաղադրիչներ, որոնք, թէեւ երբեմն լատիներէնից ու ֆրանսերէնից (կամ մի այլ լեզուից) են սերում, ունեն որոշակի անգլիական հնչում: Դրանց տառադարձութիւնը, մեծ մասամբ հիմնուած լինելով կենդանի արտասանութեան վրայ, այնուամենայնիւ պարունակում է որոշ պայմանականութիւն: Ահա դրանցից մի քանիսը:

Անգլերէն	Օրինակներ	Հայերէն	Օրինակներ
-tion(al)	nation(al), organisation	-շիոն(ալ)	նաշիոն(ալ), որգանիզաշիոն
-sion(al)	division	-ծիոն(ալ)	դիվիզիոն
-ture	venture, Picture Post	-շուր	վենչուր, Պիկչուր Պոստ (Փոստ)
-age	vintage	-աջ	վինտաջ
-ain	Britain, mountain	-ան	Բրիտան, մաւնտան
-ay	Hemingway, Broadway	-է	Հեմինգվէ, Բրոդվէ

Անգլերէն	Օրինակներ	Հայերէն	Օրինակներ
–ey	Sydney, Disney, Jersey	–ի	Սիդնի, Դիսնի, Ջերսի
–our	harbo(u)r	–որ	հարբոր
–wich	Greenwich, Ipswich	–ուիչ	Գրինուիչ, Իփսուիչ
–wick	Warwick, Lerwick	–ուիք	Վորուիք, Լերուիք
–way	Broadway, Hemingway	–վէ	Բրոդվէ, Հեմինգվէ
land	Maryland, Sutherland	լանդ	Մարիլանդ, Սաութլանդ
new	New York, Newport	նիու	Նիու Յորք, Նիուպորտ
port	Newport, Port Elizabeth	պորտ	Նիուպորտ, Պորտ Ելիզաբեթ
borough, brough, burgh	Peterborough, Conisbrough, Edinburgh	բուրգ	Պիտերբուրգ, Կոնիսբուրգ, Եդինբուրգ
ton (=town)	Boston, Washington	թոն (=թաւն)	Բոսթոն, Վաշինգթոն
hampton	Southampton, Northampton	(հ)ամփթոն *	Սաութ(հ)ամփթոն, Նորթ(հ)ամփթոն
ham	Nottingham, Durham	(հ)ամ *	Նոթինգ(հ)ամ, Դար(հ)ամ
kirk	Selkirk	քիրք	Սելքիրք
man	Truman, Chapman	ման	Թրուման, Չափման
chester	Manchester, Winchester	չեստր	Մանչեստր, Վինչեստր
shire	Yorkshire, Cheshire	շիր	Յորքշիր, Չէշիր
* «Հ»ն համը է			

Ամեն ձեւ հաշուի է առնում ոչ միայն անգլերէնի արտասանութիւնը, այլեւ անուան ստուգաբանութիւնը եւ այլ լեզուներից ծագած լինելու հանգամանքը: Մի քանի բացատրութիւն:

Ճիշտ չենք համարում, օրինակ՝ ուղեւորներից պատճենած սովետահայերէն «լենդ» տարբերակը, որը հակասութեան մէջ է մտնում ե՛ւ ստուգաբանութեան, ե՛ւ աւելի լայն տարածում գտած «լանդ» տարբերակի հետ: «Tion» եւ «sion» վերջաւորութիւնները տառադարձում են նաեւ առանց ձայնաւորի՝ «չն, ժն»: Սակայն մենք գտնում ենք, որ «չիոն, ժիոն» ձեւերը աւելի լաւ են արտայայտում ստուգաբանութիւնը եւ միաժամանակ աւելի ճկուն են ուղղագրական եւ ուղղախօսական տեսանկիւնից: «Age» վերջաւորութիւնը, թէեւ հնչում է [իջ], գերադասում ենք գրել «աջ»: «Ture» վերջաւորութիւնը գրում են ձայնաւորով՝ «չուր»: «Համփթոն, Համ» ձեւերի մէջ «Հ»երը գրում ենք, բայց չենք արտասանում (տե՛ս վերը):

Հարցը, ինչ խօսք, բաց է քննարկման համար:

Ժթ) Անգլերէնում գործածելի են ֆրանսերէն կամ լատիներէն տեսքով առանձին բառեր ու արտայայտութիւններ²², որոնց համար անգլերէնն ունի իւրապատուկ՝ արտասանութիւն (յաճախ՝ «ձայնաւորների մեծ տեղաշարժի» կանոններով): Թէեւ այդ արտասանութիւնը գլխաւորապէս հետեւում է անգլերէնի օրէնքներին, այն երբեմն ունի իր առանձնայատկութիւնները: Ինչպէս եւ նախորդ յօդուածում էինք առաջարկել ֆրանսերէնի համար, մենք հետեւեալ մօտեցումն ենք առաջարկում: Եթէ անգլերէն խօսքի մէջ անգլիալեզու մարդը այդ բառը չի ընկալում որպէս օտար դարձուածք (հարցը, ինչ խօսք, նուրբ է), այն տառադարձում ենք ինչպէս անգլերէն որեւէ բառ: Օրի-

²² Խօսքը ֆրանսերէնի կամ լատիներէնի տեսքը պահած բառերի մասին է, քանզի ֆրանսերէնից կամ լատիներէնից սերած անգլիացած բառեր անգլերէնում հազարներով են հաշւում:

նակ՝ city սիթի, coast քոստ, desert դեզերտ, country քանթրի, forest ֆորեստ, river ռիվեր, lake լեյք, valley վալի, agenda աջենդա, et cetera ետ սետերա, vice versa վայսի վերսա եւ նման բազմաթիւ բառերի մէջ անտեղի կը լինէր ներմուծել բուն ֆրանսերէն կամ լատիներէն արտասանութիւնը:

Սակայն ֆրանսերէնի ու լատիներէնի շունչը պահած արտայայտութիւնները ցանկալի է տառադարձել ուղղակի ֆրանսերէնից եւ լատիներէնից: Օրինակ՝ *tête-à-tête* դարձուածքը անգլիացիները հնչեցնում են [թեյթաթեյթ] կամ [թեյթըթեյթ]: Ցանկալի է տառադարձել անմիջապէս ֆրանսերէնից՝ «տետետետ»:

Նմանապէս՝ *venire facias* [vi-'nai-ri 'fer-fi-əs] տառադարձում ենք լատիներէնից՝ վենիրէ ֆակիաս (եւ ոչ թէ «վինայրի ֆեչիաս»): Սակայն *venireman* [vi-'nai-ri-mən] ստիպուած ենք տառադարձել «վինայրիման», քանզի բառը արդէն պարունակում է անգլերէն «man» բաղադրիչը: Տեսնո՞ւմ էք, թէ որքան դժուար է տառադարձութեան խնդիրը:

Նմանապէս. *alibi* ['æ-li-'bai] ալիբի, *status quo* [ster-təs 'kwəʊ] ստատուս քուո, *habeas corpus* ['her-bjəs 'kɔ:pəs] հաբէաս կորպուս, *sine qua non* [sar-ni kwei 'nɔn] սինէ քուա նոն, *persona non grata* [pɜ: 'səʊ-nə nɔn 'gra:tə] պերսոնա նոն գրատա, *a priori* [ei-'prai-'əʊ-rai] ա պրիորի, *jus soli* [dʒəs 'səʊ-'lai] յուս սոլի, *veto* ['vi:təʊ] վետո, *dramatis personae* ['dræ-mə-tis pɜ: 'səʊ-ni:] դրամատիս պերսոնէ, *affidavit* [æ-fi-'der-vit] աֆիդաւիտ:

Ի) Անգլերէնում գործածելի հին յունարէն բառերի հնչիւնները նոյնպէս ցանկալի է մօտեցնել հին յունարէնի տառադարձութեանը (եթէ այդ անունները հային ծանօթ են հենց յունարէնից): Օրինակ՝ *pneumatic*, *pseudonym*, *xylophone*, *archipelago*, *ocean* բառերը աւելի տրամաբանական է գրել պնեւմատիկ, փսեւդոնիմ, քսի-

լոփոն, արքիպելագո, ովկիան(ոս), քան թէ՝ նիումաթիք, սիուդոնիմ, զայոֆոն, արքիփելագո, ոչիան: *Annapolis* պէտք է գրել Աննապոլիս, քանզի այստեղ առկայ է «պոլիս» բաղադրիչը եւ «Աննա» անձնանունը (եւ չգրել «Անափոլիս»): *Uranus*, *Pluto*, *Apollo* եւ դիցաբանական այլ անունները բնականաբար միայն յունարէնից (իսկ լատինականները՝ լատիներէնից) պէտք է տառադարձել՝ Ուրանոս, Պլուտոն, Ապոլոն/Ապոլոն:

Անգլերէնը, մասնաւորապէս, բառակցքին յունարէն «ps-, pn-, gn-» կապակցութիւնների մէջ չի արտասանում առաջին բաղաձայնները (իր համար խորթ է այդպիսի արտասանութիւնը), բառակցքի «x» տառը հնչում է [z], եւ այլ իւրայատկութիւններ, որոնց պէտք է ուշադիր լինել:

Նման դէպքերում տառադարձումը յունարէնից հետեւեալն է. «ph / փ», «th / թ», «ch / ք», «ps / փս», «x / քս» եւ այլն²³:

Իս) Նոյն եւ գուցէ աւելի խիստ մօտեցումը պէտք է ցուցաբերել աստուածաշնչեան յատուկ անուններին, այն է՝ դրանք ոչ թէ տառադարձել անգլերէնից (կամ որեւէ մի այլ լեզուից), այլ առնել հայերէն աւանդական ձեւերը, այնպէս ինչպէս դրանք հանդէս են գալիս մեր ոսկեդարեան թարգմանութեան մէջ: Եթէ անունը ինչ-որ ձեւով, նոյնիսկ հեռաւոր, ականարկում է Աստուածաշունչը կամ իր մէջ աստուածաշնչային ենթիմաստ է պարունակում, անունը պէտք է լինի հայեցի: Օրինակ. *Noah*, *Methuselah*, *Moses*, *Joshua*, *Mark*, *Luke*, *John* լինելու են Նոյ, Մաթուսաղա, Մովսէս, Յեսու, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս, եւ ոչ թէ, ասենք՝ Նոա, Մեթուսելա, Մոզիս, Ջոշուա, Մարք, Լուք, Ջոն:

²³ Աւելի մանրամասն տե՛ս մեր յօդուածաշարքի Բ. մասը (հիմ յունարէն եւ լատիներէն):

իբ) Այլ օտար լեզուներից անգլերէն մտած բառերի հնչիւնները նմանապէս նախընտրելի է գրել փոխատու լեզուի օրինակով, պայմանով, որ փոխատու լեզուն յայտնի լինի հայ լեզուաբանութեանը եւ մտնի փոխատու լեզուների պաշտօնապէս հաստատուած ցուցակի մէջ²⁴: Օրինակ՝ *California, Colorado, Nevada, Montana* նահանգների անունները սպաներէն են (սպաներէնի մասին՝ կը խօսենք յաջորդ յօդուածներից մեկում), հետեւաբար՝ *Կալիֆորնիա, Կոլորադո, Նեւադա, Մոնտանա*: *Texas* նահանգի համար արեւելահայերէնը ունէր *Տեխաս* ձեւը (սպաներէնից, ռուսերէնի միջնորդութեամբ), որն այսօր գրում են նաեւ թեքսաս՝ անգլիական տառադարձութեամբ: Անունը հնդկացիական է, եւ մեր լեզուաբանութեանը յայտնի է դրա իսկական հնչումը: Այստեղ երկու ձեւերն էլ իրենց արդարացումն ունեն: Մենք աւելի հակուած ենք սպաներէնից եկած ձեւին (*Տեխաս*), քանի որ [խ] հնչիւնը չէր կարող շփոթուած լինել [ք]ի հետ (անգլերէնի «ք»ն ուրեմն ակնյայտօրէն գրութեան շփոթն է): Նմանապէս, օրինակ՝ «*Port Patrick*» գրելու ենք «Պորտ Պատրիկ» եւ ոչ՝ «Փորթ Փաթրիք», քանզի երկու բաղադրիչներն էլ ռոմանական լեզուներից յայտնի անուններ են:

իգ) Ինչպէս վերը նշեցինք, լատինական տառերի անուանումները, «ձայնաւորների մեծ տեղաշարժի» հետեւանքով, արդի անգլերէնում ձեռք են բերել յատուկ արտասանութիւն: Եթէ անգլերէնի՝ աւանդական դարձած յապաւումները անգլիական հնչումով ենք միայն ընկալում (*BBC* ԲիԲիՍի, *ABC* ԵյԲիՍի, *FBI* ԵֆԲիԱյ եւ այլն), ապա հայ հասարակութիւնը պէտք է միաժամանակ գիտակցի, որ այդպիսի արտասանութիւնը դուռ է բացում ամեն տեսակի չարաշահումների առջեւ, եւ լա-

տինագիր ամեն մի լեզու կարող է պահանջել, որ իր յապաւումները ի՛ր ձեւով տառադարձենք: Մենք կողմ ենք լատինական տառերի միասնական տառադարձմանը, այնպէս ինչպէս նկարագրել ենք մեր յօդուածաշարքի Բ. մասում (հին յունարէն եւ լատինարէն). *A* ա, *B* բէ, *C* կէ, *D* դէ եւ այլն, օրինակ՝ *Sky TV* Սքայ ՏէՎէ, *NHL* ԵնՀաՆլ, *MTV* ԵմՏէՎէ եւ այլն:

Ուստի՝ բացարձակ սխալ է անունները տառերով հեգելուց դրանք անգլերէն ձեւերով մատուցելը, ինչպէս՝ Ոստայնի (Համացանցի) անուններ ու հասցէներ, ելեկտրոնային հասցէներ եւ այլն: «*.am*»ը պէտք է հնչի [կէտ, ա, եմ] եւ ոչ թէ [կէտ, եյ, եմ]:

Ձայնաւորների օգնութեամբ «բառ» դարձած անունները կարելի է այդպէս էլ արտասանել, ինչպէս՝ *NATO* գրում եւ կարդում ենք *ՆԱՏՈ* (անշուշտ ռուսերէնի ազդեցութեամբ), եւ ոչ *Նեյթո*, նմանապէս՝ *NASA* *ՆԱՍԱ*, *SWIFT* Սուիֆթ եւ այլն:

*UNESCO*ի ճիշտ տառադարձումը կը լինէր *ՈՒՆԵՍԿՈ*, քանզի *United* բաղադրիչի «*U*» տառը լատինարէնի «*ՈՒ*»ն է: Ուստի՝ «*Յ*» տառը այս դէպքում աւելորդ է դնել: Այլապէս, եթէ միայն ու միայն անգլերէն հնչումով գրէինք, ապա *Cultural* բաղադրիչի «*C*» տառն էլ «*Ք*» պիտի գրէինք, ինչպէս եւ ունենք սփիւռքահայ *ԵՈՒՆԵՍԲՕ* ձեւը (նմանապէս խոտելի):

Հարցը բազմաթիւ խնդիրներ է յարուցում եւ այն արժէ քննութեան դնել:

իդ) Անգլերէնը յատուկ անունների իմաստակիր բոլոր բաղադրիչները գլխագրերով է դնում (մի քանի դար առաջ անգլերէնը բոլոր գոյականներն էր գլխագիր գրում՝ ինչպէս այսօր գերմաներէնը): Օրինակ՝ «*British Museum*»ի մէջ գլխագիր է նաեւ «*Թանգարան*» բառը: Հայերէնի քերականները յար եւ միշտ պնդել են, որ յատուկ անունների մէջ սկզբունքօրէն միայն առաջին բառն է մեծատառ գրւում (պարզեցրած ենք ներկայացնում), այսինքն՝

²⁴ Տե՛ս յօդուածաշարքի Ա. մասի ներածական եւ տեսական դատողութիւնները:

մենք գրում ենք՝ Բրիտանական Թանգարան: Այդպիսի մտեցումը գալիս է Ֆրանսերէնից: Արեւմտահայագիր որոշ հեղինակներ, անշուշտ անգլերէնի ազդեցութեամբ, Սփիւռքում փորձում են բոլոր բաղադրիչները գլխադրել: Մի կողմից՝ Ֆրանսական մտեցումը տրամաբանական է. իմաստ չունի ամեն ինչ գլխադրել: Սակայն միւս կողմից՝ անգլիական գրելաձեւը ազատում է այս կամ այն բաղադրիչը մեծատառ գրել չգրելու գլխացաւանքից (կանոններ, որ մեր քերականութիւնների մէջ էջեր կարող են զբաղեցնել): Հարցը անշուշտ մեր տառադարձութեան հետ անմիջական կապ չունի, սակայն տառադարձութիւնը պէտք է ենթարկուի հայերէնի ընդհանուր օրէնքներին:

Ինչպէս եւ ամեն օտար լեզուի պարագայում, հնարաւոր եւ նախընտրելի ենք համարում աշխարհագրական անունների որոշ մասնիկների թարգմանութիւն: Ինչպէս ունենք, օրինակ՝ Նոր Որլէան, Նոր Զելանդ(իա), Նոր Կալեդոնիա, այնպէս էլ պէտք է ունենանք Նոր Դելի (եւ ոչ թէ անիմաստ Նյու/Նիւ ձեւով, որը նոյնիսկ հնդկերէն չէ): New Mexico նահանգը սովետահայերէն գրում են «Նյու Մեքսիկո», անշուշտ ռուսերէնի ազդեցութեամբ: Սակայն սպաներէնը ասում է Nuevo México, Ֆրանսերէնը՝ Nouveau-Mexique, յունարէնը՝ Νέο Μεξικό: Յատկապէս աշաւորջ պէտք է լինել այս հարցում. պէտք է ազատուել օտար լեզուների ազդեցութիւնից եւ նախընտրել հայերէն թարգմանութիւնները: Սովետահայերէնը մի յոռի սովորութիւն ունէր. այն ինչ ռուսերէնը թարգմանում էր, նա էլ էր թարգմանում, այն ինչ՝ ոչ, ոչ: Իսկապէս՝ ի՞նչ պատկեր կ'ունենայինք, եթէ «North Dakota»-ն գրէինք «Նորթ Դաքոտա», կամ «West Virginia»-ն՝ «Վեստ Վիրջինիա»: «New Hampshire»-ը շատ աւելի գրագէտ է գրել Նոր Համփշիր, քան թէ Նիու Համփշիր (այսօր արեւմտահայերէնը գրում է Նոր..., արեւելահայերէնը՝ Նյու...):

Գետերի անուններն տեղակայուած քաղաքները, ինչպէս աւանդոյթ է, հայերէն քերականութեամբ ենք մատուցում. Stratford on Avon Աւոնի Ստրատֆորդ, Newcastle upon Tyne Թայնի Նիուքասլ:

Իզ) Եւ վերջապէս, խիստ կարեւոր է, որ հայերէն տառերով գրած անուան մէջ շեշտը վերջավանկ արտասանուի: Ամեն լեզու, ինչպէս իր բնիկ, այնպէս էլ փոխառեալ յատուկ անունները, շեշտադրում է այնպէս, ինչպէս իր լեզուի հասարակ անունները: Օտար յատուկ անունները նոյն օրէնքի տակ են գնում. լեզուն յարմարեցնում է նրանց շեշտը ըստ իր հայեցողութեան: Հայերէնը նոյն մտեցումն ունի: Քանի որ հայերէն բառերը վերջավանկ են (մի քանի բացառութիւնները չհաշուած), ապա օտար բոլոր անունները վերջավանկ են հնչում: Սա մի օրէնք է, որ հայ հասարակութիւնը միշտ չէ, որ գիտակցում է:

Վաշինգթոն, Շեքսպիր, Նոթինգհեմ, Դարուի, Չափլի, Հոլիվուդ եւ աւանդական բոլոր անունները (ներառեալ հին յունարէն, լատիներէն եւ այլ լեզուներից փոխառեալ) վերջավանկ են: Նոյն կերպ պէտք է հնչեն եւ՝ Մարգարե՛տ, Վիլիա՛մ, Հիլարի՛, Լոս Անջելե՛ս եւ այլ բոլոր անունները, ինչպիսին էլ լինի նրանց տեսքը եւ օտար լեզուի հնչողութիւնը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Նախորդ յօդուածների ամփոփիչ մտքերի մեծ մասը հաւասարապէս վերաբերում է եւ անգլերէնին (եւ այստեղ դրանք չենք կրկնում): Անգլերէնն այսօր միջազգային ամենատարածուած լեզուն է, եւ դրա ճիշտ տառադարձումը խիստ կարեւոր է ժամանակակից կեանքում: Անգլերէնից գրագէտ եւ միացեալ տառադարձութիւն մշակելու գործում հայերէնը պէտք է հրաժարուի ինչպէս կիլիկեան, այնպէս էլ սովետական տառադարձումներից:

Որպէս եզրափակում, մենք սկզբունքային հետեւեալ մօտեցումները կ'առաջարկէինք անգլերէնի տառադարձութեան համար, որոնք կարող են օրէնք դառնալ բոլոր լեզուների պարագայում: Կետերը կարգել ենք ըստ առաջնայնութեան:

ա) Ամենավերին աստիճանին կանգնած են հայերէնի դասական ուղղագրութիւնն ու ուղղախօսութիւնը: Ինչպէս հայոց լեզուի իւրաքանչիւր բառ, այնպէս էլ օտար որեւիցէ անուն կամ փոխառեալ նոր բառ պէտք է ենթարկուի հայոց լեզուի գերդաստանի ընդհանուր կանոններին: Օտար բառերը չեն կարող այլ գրութիւն կամ արտասանութիւն ունենալ, քան հայերէն բառերը: Այլապէս նրանք վաղ թէ ուշ դուրս են մղուելու լեզուից:

բ) Վերից երկրորդ աստիճանին կանգնած են տառադարձութեան կանոնները: Ինչպէս ամեն լեզու, հայերէնն էլ ունի տառադարձութեան ի'ր օրէնքները եւ օրինազանց բառերին կա'մ բնաւ տեղ չի տալիս իր լեզուում, կա'մ ժամանակի ընթացքում յղկում է նրանց տեսքը:

գ) Երրորդ աստիճանին կանգնած է ստուգաբանութիւնը: Օտար անունները տարբեր լեզուների են պատկանում, բայց մեկից միւսին անցնում: Անհրաժեշտ է յստակ պատկերացնել, թէ այս կամ այն անունը ինչ լեզուից պէտք է տառադարձել: Ժշմարտութիւնը գտնելու համար մշտապէս պէտք է երթուղարձ անել զանազան լեզուներից սերած բառերի ու անունների միջեւ:

դ) Օտար լեզուի գրութիւնը կարեւոր գործօն է, առանց որի որեւէ տառադարձութիւն թերի է: Գրութիւնը յաճախ ցոյց է տալիս ստուգաբանութիւնը, ճշտում կիրթ արտասանութիւնը, եւ հնչիւնները համախմբում մի հնչոյթի ներքոյ:

ե) Տառադարձութեան հիմքում, սակայն՝ ստորին աստիճանին, ընկած է օտար լեզուի գրական հնչումը: Սա սկզբնական է որեւէ տառադարձութեան: Այնուամենայնիւ, վերին աստիճանին հասնելու եւ հայեցի անուն դառնալու համար, օտար արտասանութիւնը պէտք է անցնի միւս աստիճանների բովերով, թրծուի եւ հայանայ՝ մինչեւ կարողանայ ընկալելի լինել հայերէն լեզուի ընտանիքի անդամների համար:

Անգլերէնից կատարած տառադարձութեան քննութիւնը առաւել ակնյայտօրէն է ցոյց տալիս, թէ մի լեզուի տառադարձութիւնը որքան բարդ ու բազմակողմանի երեւոյթ է, եւ որ այն չի կարելի վստահել միայն մեկ լեզու գիտեցող անձի: *Timeo hominem unius libri*, վախենում եմ մի գիրք (կարդացած) մարդուց, — ասել է Սբ. Թովմաս Ա. քուինացին: Վերաձեւելով նրա միտքը կ'ասէինք՝ *Timeo hominem unius linguae* (վախենում եմ մի լեզու սովորած մարդուց):

Résumé

Les Principes de la translittération (transcription) arménienne des noms propres étrangers

IV partie – la langue anglaise

Armen Michaelian (historien linguiste)

Le présent article fait partie d'une série qui traite de la translittération des noms propres étrangers en arménien (de la façon de transcrire les noms étrangers en caractères arméniens). La première partie de la série était consacrée aux langues du Proche-Orient (l'arabe, le persan, le turc et l'azerbaïdjanais); voir Armen Michaelian, *The Principles of Translitterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages [en arménien]*, *Haigazian Armenological Review*, vol. 40, Haigazian University Press, Beirut 2020, pp. 341-364. La deuxième partie de cette série traite des deux langues classiques, le grec ancien et le latin; voir Armen Michaelian,

Les Principes de la translittération arménienne des noms propres étrangers, II partie – langues classiques (grec ancien et latin) [en arménien], Bazmavep, CLXXVIII année, 2020, N° 1-2, pp. 304-336. La troisième partie de la série est consacrée au français ; voir Armen Michaelian, The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part III – French Language [en arménien], Haigazian Armenological Review, vol. 41, Haigazian University Press, Beirut, 2021, pp. 443-466.

La quatrième, présente partie de la série est consacrée à la translittération des noms propres de la langue anglaise. Le principe de la translittération est basé (comme dans toute la série) sur l'orthographe classique de l'arménien en écartant rigoureusement la translittération « cilicienne » d'un côté et la « soviétique » de l'autre. Contrairement au grec ancien et au latin, la translittération des noms propres de la langue anglaise n'est pas stabilisée en arménien, ce qui est dû d'un côté à l'influence de la prononciation occidentale des dialectes arméniens, de l'autre

côté à l'influence de la langue russe sur l'arménien oriental.

Après un rappel des principes phonologiques et orthographiques de la translittération arménienne évoqués dans les premiers articles de la série, l'auteur passe au crible les sons et les phonèmes anglais (tant britannique qu'américain) les plus problématiques et propose (en s'appuyant sur de nombreux exemples) une translittération de principe pour chacun d'entre eux. Il est spécialement souligné que la translittération anglaise a une importance capitale, étant donné que l'anglais fournit non seulement des noms propres venant du Royaume-Uni, des États-Unis, du Canada ou de l'Australie mais aussi ceux venant du monde entier là où l'anglais a été le premier à transcrire de nombreuses langues vernaculaires auxquelles l'arménien ne peut avoir accès dans l'immédiat.

La série d'articles va continuer avec d'autres langues importantes comme l'allemand, l'italien, l'espagnol, le russe, le hindi, le chinois, le japonais etc.